Նախ՝ ոմանք զքեզ կոյր կոչեն վասն այնր, զի փոր-
ձիւ ծանեան,
Թէ դու ոչ ընտրես, ո՛վ է արժանի կամ ո՛վ անար-
ժան
Բարեացդ, պարգեւաց, զորս դու բաժանես Թարց ինչ
որոշման:
Իսոտին ցանգ գիտունք, իսկ տխմարք, անմիտք քեւ եր-
ջանկանան,
Բառնաս 'ի միոյ և բաշխես այլում միշտ կոյր զկու-
րայն,
Ո՛ւմ, ո՞րչափ, զի՞նչ, ե՞ր տաս ոչ տեսանես դու միան-
գամայն:

Ոչ սխալին և այնք, ոյք պնդեն թէ դու ես կնոջ նման.
Զի միշտ զանհաստատ ունիս բնութի, սէր խաբէական:
Բազմիցս անխտիր յարգես, մեծարես մարդիկ զան-
պիտան:
Անխոհեմ սիրով պատրաստես նոցա հրճուանաց
խրախճան:
Առնես զոր կամիս առանց ընտրութե, անա՛հ, ան-
սասան.
Ոչ խղճաս բնաւ առ եղկելիս քո կարօտ այցելման:

Բայց աւաղ նոցուն վիճակի, որք ոսկւոյ հաւատան,
Եւ ամբարտաւանս պարծին, խրախճանան կարծեօք
սխալական,
Իբր թէ՝ կոյր սէրդ մնացէ ՚ի նոսին անանց յաւի֊
տեան։ —
Կանացի բնութ̄ որոնես անդուլ քեզ նոր սիրական,
Անկարծ փոփոխես, առնես զնախկին սէրդ ոտից կո֊
խան,
Յայնժամ սիրելիդ՝ զրկեալ ՚ի գթոյդ լայ բարձեալ
կական։ —

⊠ ⊠

Ասեն թէ և ես խոստովանէր, անխիղճ, անիրաւ իշխան.
Եւ կարծէ արդարանալ այս կարծեօք, զի դու միշտ մարդ֊
կան
Իշխես և յանխիղճս հայիս խիստ աչօք յամէն ատե֊
ճան,
Օ անմեղս, զթշուառս ենթարկես պատժոց, ըլկա֊
նաց դաժան,
Եւ զանիրաւի խլես յարդարոյն ստացուած հա֊
մայն,
Արգելելով զայն՝ որում ոչ իմիք համարի արժան։

⊠ ⊠

Ասա մեռիք, չքաւորք, որք սովու ձնշին, ՚ի կարիս
ազան,
Ընդ ումն անզգաւակ յղփանայ բաբեօքդ ՚ի պերճ ձո֊
խութեան։

Աստ հեղ լալագին աւուր պաշենի մնայ գերդաստան,
Իսկ անդ մեծատուն անկարօտ խնճք կեայ յանհո-
գութեան . . .
Ահա անիրաւ, բերա քննաւորեդ անխիղճ դատաւորան,
Սոսկ քո հլուք ՚ի զուր կորնչին, կամ փառօք պանծան։

Այս յեղափոխոխ քո գործառնութիւնք հարկան աւեթ-
տան
Ակայէլ թէ՝ դու չես ինչ, այլ ոչինչ սուտ և
կեղծական։—
Թող ներհակք կարծեացս ընդդեսցեն զքեն զիւրեանց
դատ և բան,
Այլ ես զիմ անհաշտ թշնամեայդ խօսիմ քաղցրանց
համաձայն,
Ասեմ և գրեմ արձակ, համարձակ, զոր ինչ և արժան,
Զի խլել ոչ կարես յինէն զոր չետուր ինձ ՚ի
կեանս համայն։—

## ԱՊԱԺԱՄ ԶՂՋԱՑՈՒՄՆ․

Ո՛հ, զի՞ իմ անցին կեանք ունայն, արագ,
Զուր կորեան մատաղ ամք, ծաղկեալ հասակ։
Զի՞ իմ փոխեցաւ բարեբաղդ վիճակ,
Յուսահատ ցաւոց եղէ ես ճարակ։
Ա՛ղէ, ո՛չ կարեն ոչինչ ջանք, վաստակ
Նորել զիմ նախկին զուարթ յաջողակ․
»Զի անցին անդարձ կեանք իմ ընդունայն,
»Ո՛չ բերի 'ի միտ զղջումն յապաղայն։

Անհոգ տղայութիւս էր արձակ, ազատ,
Ո՛չ գոյր նախ յիս այս ախտ, ցաւ անփարատ,
Չ՛էր ծանօթ նոցա խոցոտիչ խղճատ։
Յուսայի խնդալ բաղդիւ անընդհատ,
Ասահ յանձնայն, զուարթ անվհատ,
Կեայի յաղէտից հեռի, անարատ։
»Բայց աւա՜ղ, զի իմ անցին կեանք ունայն,
»Չ՛յիշեցի երբեք զղջումն յապաղայն։

Կորուսեալ 'ի սպառ անցաւոր փառօք
Զաւարճալի աւուրց, հեշտալից կենօք
Չ՛կարծէի բնաւ՝ թիւրադարձ մտօք,
Թէ գայ փոփոխումն վիճակիս ամօք։

Այս միտք զարտուղի Թուէր ինձ բարւոք,
Թուէր Թէ՛ քան զիս չիք ոք քաջ, խելօք.
»Վասն որոյ անցին իմ կեանք ընդունայն,
»Մոռացայ 'ի սպառ զղջումն յապագայն.

Հետեւեալ խաղուց, մոլար զբաղմանց,
Յատուկ զ՚բօսանաց անխոհեմ մանկանց*
Չ՚անսայի բնաւ գործոցս հետեւմանց,
Կամ զուր ընթացից աւուրց իմ վաղանց.
Փորձ չառեալ երբեք աշխարհին բերմանց,
Կարծէի լինիլ կենաց իմ անանց.
»Յայս վարըս մոլար անցին կեանքս ունայն,
»Աստի ինձ ծնաւ զղջումն յապագայն.

Պարտէ մաքուր տալ հաւատ մարդկան,
Տածել առ նոսա սէր սուրբ, հոգեկան,
Իր վասն իմ պարտիք անշուշտ, անխափան.
Դիմակ կեղծ սիրոյ սրտաց սեպհական,
Չար բարք, նենգամէտ, սիրտք նոցա դաժան
Չ՚էին բնաւ յայտնի ինձ անփորձ մանկան.
»Որ ոչ խորհէի Թէ կեանք իմ ունայն
»Անցանեն եւ զայն զղջումն յապագայն.

Բայց անակնկալ դիպուած մերահաս
Ուսոյց ինձ զգին անոց չափահաս.
Զգեալ ակամայ 'ի ծերոց զիս դաս՝

'Ի յուշ եկած լինի, թէ եմ դեռահաս,
Թէ տեղեկութիք իմ են յոյժ պակաս,
Եւ թէ կրից և եթ արկանեմ սպաս։
»Այլ զի՞նչ օգուտ, զի կեանքս անցին ունայն,
»Ներբեալ 'ի վերայ զղջումն յապաղմայն։

Այս յամր, անազան զարթումն զգալեաց
Օր աւուր ետ լոյս մնաց իմ աչաց։
Տեսի զիմ անշահ զեղանակ կենաց,
Ո՜ կոյր հետեւումն խաղուց, ձեմելեաց,
Յորոց ծնանին պտուղք զրկմանաց,
Ո՜ եղխուն բարուց, բերմունք փորձանաց։
»Դա որոց անցին կեանք իմ ընդունայն,
»Եւ եկն զհետ զղջումն յապաղմայն։

Տեսի, զի 'ի զուր անանց, անխոհեմ
Մտերիմ ընկերաց միշտ լինիմ ընդդէմ.
Յամէն անխտիր սէր, հաստատ ձգեմ,
Ո՜ տարս, թշնամիս կուրութեամբ յարգեմ։
Հետեւեալ չարեաց, զբարին ատեմ,
Եւ կանխաւ զաղէտս անձին պատրաստեմ.
»Անցուցեալ զկեանս զուր և ընդունայն,
»Հանդերձեմ ինքեան զղջումն յապաղմայն։

Տեսի, զի հակեալ յանարգս ամենայն՝
Ոգտիմ ցանգ առ իրս անպէտ և ունայն.

'Ի համեստ փառաց զզուիմ, խառեմ զայն,
Թէ չ'է հեշտակիր, ընդ իս համաձայն։
Անկանոն բարուք շահուցս հոգեկան
Չանհոգս անդադար լինիմ ես խափան։
»Ահ, զի՞ անցուցի կ'եանս անխնայ, ունայն,
»Ո՛չ բերի 'ի միտ զղջումն յապագայն։

Արդ՝ խորհեմ ց'անձն իմ, ո՞ւր են յաջող ժամք,
Ո՞ւր առոյգ հասակ, քաղցրութե՞ քո ամք։
Աղե՞ն քեզ յայտնի զառնագգեստ չարքամք,
Ընդէ՞ր չառնեն եւս քեզ այց բարեկամք։
Միթէ՝ լցա՞ն նոցին հարկ, կարիք և կամք,
Սէր, մտերմութի, հոգատար խընամք։
»Նայ, անցին կեանքդ անդարձ, զուր, ունայն,
»Չ'յիշեցեր երբէք զղջումն յապագայն,

Ապաժամ մտածմունք ո՛չ լիցին քեզ հնար
Բուժելոյ զվէրս, յորոց վա՛ղ հարար։
Նոյն և ապաշաւք ո՛չ կարեն խաւար
Անցեալ քո աւուրց լինել լուսաբար։
Ի ձեռ օրհասի, ըստ գործոց արդա՛ր՝
Այս ցաւոց զքեզ անձնազոհ արար։
»Արդ՝ իմա՛ զի քո զանցեալ կեանս ունայն,
»Ո՛չ նորոգեսցէ զղջումն յաւիտեան « «

# ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ.

(Բայրըն։)

Երգեմ դու յանդորր մայրուց խաւարին,
Քաղցրի՛կ, հեզ, համբոյր տատրակ ծանրագին;
Երգեմ առ լուսով մթամերձ լուսնին,
Զի՝ ախորժ լսի ձայն քո իմ սրտին;

Բայց ե՞ր գետորէն աղբիւրք արտօսրին
Հնչեալ յիմ աչաց առ այտ հեղանին.
Բաբէ, անմոռացք ինձ 'ի յուշ եկին. . . ,
Ծածկեալ 'ի խաւար ծոց խոնաւ երկրին;

Գերեզմանք նոցա դալարեօք ծածկին,
Ընդ խիտ մացառովք գո՛գցես չերեւին;
Չե՛ք իմ անձկալիք, ընկերք կաթոգին. . . ;
Աւա՜ղ, որք մընաց անձն իմ ցաւագին։

»Երգեմ դու յանդորր մայրուց խաւարին,
»Քաղցրի՛կ, հեզ, համբոյր տատրակ ծանրագին։
»Երգեմ առ լուսով մթամերձ լուսնին.
»Զի՝ ախորժ լսի ձայն քո իմ սրտին«« ։

# ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ·

(Թարգմ՛.)

## ՀՈԳԻ։

(Հատուած)

Չերգեմ զՊէլեայց ցասումն զանայի, Տրովադայն զմարտ,
Ոչ յանդուղ խռովմունս դրաւէին մահու դիւցազունք անպարտ·
Այլ Հոգի ես երգեմ։
Օ՛ քեզ, ո՛վ Հոգի՛ ես ինձ յօգնութի աստէն հրաւիրեմ,
Պճնել զիմ զերգ խոհեմ,
Օ՛ որ ես աստանօր պարզ և անպաճոյճ, ազատ յօրինեմ.—
Ո՛չ զահեղագոչ լսես քնարին, այլ սրնգին զձայն։
Դուն, էջ առ իս, էջ 'ի կայանացդ քեզ հաճոյական,
Շնորհեա ինձ զմիտս գերդ և խանդակաթ, տուր ինձ զուշ վստահ,
Մտաչիւ երջանիկ և խաղաղ չինեց առ բաղդ դերագահ,
Ուր քաղցրիկ զաւուրս դու անցուցանես միշտ առանց չարեաց,
Ուր Թագաւորին բերկրութիք և եթ անմահն 'ի վշտաց·

Մ՚երձ ցուրտ եղերաց սառն սառուցիք մեծի Ար-
լաճենի,
Ուր պատի միգաւ և ծածկի յաչաց բոցացայտ Արփի,
Յո՛յց ինձ հիասքանչ դու Իպոկրենի զընթացս յոր-
դահոս:
Ծածկեալ բլրակօք դիզացեալ խիստ ձեան սառէն
Պառնասոս,
Ո՛չ անգամ միայն լուծեալ հալեցաւ ՚ի տեսոյդ հե-
ղինի:
Ընդ քեզ դեգերին անդո՛ւլ, անաշխատ Զեփիւռք
քաղցրասիք,
Փախչին ՚ի տեղեաց, ուր դու ընթանաս Ալթիւք
ձանձրալից,
Բասրանք և ոճիրք, տրտմութիւնք և վիշտք, աղէտք
և չարիք:
Ծանց քո հրճուանք են վաստակ և եթ յայժ
դաժանաջան,
Խոժոռին բերկրանք, որքան որք Մուսք բար-
ձեալ զկական;

Ո՛վ դու քաջընտիր երգիչ Աստուծոյ՝
Հոմերոս հմուտ, Հայր քաջ քերթուածոց,
Լի ամենուրեք մտօք, հանճարով,
Հաստատ և զոյգ համակշիռ չափով.
Ներեա՛ յանցանաց իմոց աղաչեմ,
Զի զերդ չափաւոր ես ո՛չ յօրինեմ;
Հասարակ մտօք եմ ես բաւական,
Ըստ աղքատ ձեռոյ տաղաչափութեն;

Զափ՛եմ և ձևեմ 'ի կերպ ամենայն,
Է՛ զի համառօտ և է՛ զի երկար։
Եւ յաճախ զյանգս, որք չ՛են հաւասար,
Առանց արժանի զուգութեան տաղից
Դնեմ համարձակ ես 'ի վերջ տողից։
Այլ եթէ ամուր լիցի ինձ վաստակ.
Յայնժամ ես հանդգնիմ, անահ, համարձակ,
Մոռացեալ զերկիւղ դրչաց, մելանաց,
Մոռացեալ զանձն, թոյն զեպերանաց
Առանց չափելոյ, կամ անօրինայանգ
Եւ զբանս արձակ գրեցից անխափանգ։
Օ՜ իմ ազատութի՜ւն ես և եթ սիրեմ,
Ո՛չ վասն իմ անձին պարծանաց երգեմ.
Այլ զի խորախանաց, զուարթ բերկրանաց 'ի պահ
հանգստեան,
Քաղցրալից դիմօք զուարճացի Քլոյ 'ի ձայն
ցնծութեան։
Նախ քաջ Ապողէ, և Պըլաֆոնթէն զկնի նորին,
Յանմահ յիշատակ, յաւերժ սիրալի մեծ ա-
նուանց նոցին,
'Ի բանս հեռուակ, նոյն յոտանաւորս Հոգէ երգեցին
Ընդ մեզ 'ի բարբառ այլասեռ լեզուին։
Յայսմիկ պատմութեան յայտնեցին նոքին
Հանճարեղ մտաց զաշխոյժ կայթողքին։
Այսպէս երևի, թէ զգրիչ նոցին շնորհք շարժեցին,
Կամ շնորհք ինքեանք զայն միայն գրեցին։
Թէ քաջ նոցուն ոճոյ հետևիլ եցէ ինձ անմարթ,

Երթայց հետամուտ ես զկնի նոցին, գէթ 'ի ձև անզարդ,
Ածել յանդիման զնմանն ստուեր զգոյշ, մտաւոր,
Եւ յառասուեն զեառղել յերբեմն տողս զուարթարար։

Առ Պլուտոս անդ 'ի հին Յունաստան.

Երբ ամենուրեք սերունդք իշխանաց կարի բազմացան,
Երբ յիւրաքանչիւր էր 'ի քաղաքէ արքայ յաղթական.
Եւ եթէ ցանկայր լինէր նա Ած, ունէր նա սեղան։
Յայսոցիկ բազմաց արքայից միջէ,
Մին էր հանճարեղ և յաւէտ յայտնի,
Անթիւ բազմութեամբ իւրոց զինուորաց,
Գանգրովք և դիմօք, տեսութեամբ մտաց,
Առաւելութեամբ արդեանց և ընչից,
Եւ առատութեամբ անասնոց, հացից։
Նին անդ դրացիք
Իբրու գայլք կամ արջք չարք և կատաղիք.
Յայտ է Լիկաոն.
Զորոյ պատմութիւն յօրինեաց Նազոն.
Յայտնի է, թէ ուր, և զիարդ իբրու,
Նախ վասն իւր գործոց չար, թիւր անիրաւ,
Յարքայից Յունաց 'ի գայլ փոխեցաւ,
Այլ զորմէ ես աստ այժմ կամիմ ճառել, զորմէ է իմ բան,
Ոչ կերպարանօք, և ոչ բնութ, ոչ էր նա գազան

ՈՎ յոյս, օգտաքեր հաստատակութեան,
Եւ էր Ոճոց կարի սիրական։
Բարուք վարձատրէր,
Բարուք մեղադրէր։
Եթէ 'ի հպատակս զգաստմնային հողիս գտանէր,
Ընդ այնպիսիս նա ղակմնչս իշոյ անդէն սոսնձէր,
Ոմանց ուղերձէր պժնեայ սան, զ ատն Ճերմնս յա֊
բակցէր,
Ոմանց նուէրներ փող պատաչահան, այլոց զոյգս եղջեր։
Ընդ 'ի հնուէ, որ մաշէ զամէն, կրկանէ անյագ,
Չէ պահեալ ամէողջ պահարան գործոց նորին բո֊
վանդակ։
Սակայն զօրէնակ խրատանց նորին, զմնեղծ յիշատակ
Պահէ, մեծարէ անսագան աշխարհ մինչ ցմեր ժամանակ։
Նախամնձոո արանց հրամայեաց անգործ նեղէլ յա֊
ւիտեան,
Ով զբարօրութիւն և բարդ օտարին
Յանգ չարչարեսցէ, նեղեսցէ զնոսին.
Եւ զի չիշխեսցեն վայելել երբեք յանդորր հան֊
գստեան։
Իսկ ժլատ մարդկան միշտ առ իւր ոսկի սահմանեաց
նստիլ,
'Ի յոսկի հայել.
Եւ ոսկուղ զմայլել։
Բայց ակոս չյաւել։
Նոյնպէս հպարտից պատուիրեաց զ այս երբեք մի՛
9 վարել,

Այն հպարտուն 'ի պատիժ, յամօթ եւ յեանոց
նոցին,
Որպէս մինչ ցայսօր այնոցիկ յազգի յաճախ երեւին։
Բովանդակ երկրի յոչինչ հաւատալ սատանին պա-
տուիրեաց
Ընդմին, որ չնթիւ կեղծալից բանիւք անպատկառ
պատրեաց։
Յարժանի վիճակ բամբասող մարդկան,
Եւ Թագաւորի զեկուցանողաց անիրաւուէ,
Նա ամենուրեք եհան զհրաման,
Կրել զզուելի եւ զարշ կերպարան,
Որ զբամբասողս կարասցէ յայտնել
Զորպիսի պատկեր մարթ էր տեսանել
Ոչինչ անագան 'ի Մոսկով քաղաք 'ի դիմակա-
ւան,
Երբ 'ի յոգնախումբ յակումբ հանդիսի 'ի բարեկենդան
Ամբողջ ժողովուրդ կատակէր զգործ պախարակուէ։
Զհուսկն ասացից՝ 'ի բանիցս վախճան,
Յետ նոր սահմանեալ կանոնս օրինացն եւ զհրա-
ման,
Զի ողջ չարաբարք, ժպիրք, խեղկատակք, Թարց
ինչ խտրութեան՝
Մինչ յուրեանց դիցեն 'ի գլուխս զարտախոյլս մա-
կադրով արժան,
Որովք զնոսին քաջ ճանաչէին,
Եւ 'ի նմին պահու մերժեալ խորշէին։
Դատել իրաւամբք, — չէին այս կանոնք սաստիկ
սակաւկան,

Նու ժողովրդեան թուեր հաճ հաւան,
Որ գործ համարիլ չ՚կարէր անդատին,
Օ՚այն փողնջական սովորոյթ յետին,
Յորժամ զմարդիկ ՚ի ջուր ընկենուին,
Իբրև զձկանս կայտառս ջրային։
. . . . . . . . . . . . . . . . .

## ԼՅՅԱԼՕՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ.

Ա.

Մ՞ի յանհօգս շտապաւ ղղնայր անխոհր,
Ո՛վ պանդուխտ յերկրի, հե՛ւր կենաց պատիր։
Յոտն կաց ժամ մի սոս, տես ո՞ւր եկիր,
Նայեաց բարձրացեալ յայս փոքրիկ երկիր,
Տես, ո՛ սոս ննջէ՝ խորհեաց մտաւոր,
Տես զիս, և զունայն քո զկեանս ծանիր։

Որպէս դուք և ես յերբեմն փտաւհ
Կեհի, շրջեհի զուարթուն, անահ։

Ընդէտ դիւրածախ կենցաղոյս անշահ,
Կարծէի տակաւ թէ եմ ես անմահ։
Եւ ինչ վերելակս փառաց գերագահ
Կանգնէի . . . . յանկարծ հար, արկ առ զիս մահ։

Մերտ հարեալ 'ի սէր կենաց անկայուն,
Համգոյն քեզ փառօք փայլէի նորուն,
Թուէր եւ այն ինձ անփոփոխ, մնայուն։
Չ՚հայեցայ յերկթեալ, գնացեալսն 'ի հերուն
Յիմ նմանիս, որոց վերջին յերեկուն
Նմուտ 'ի խաւար, անց լոյս արեւուն։

Էր երբեմն եւ ես այդպէս քեզ նման,
Պերճ, խրախ կենօք, բարեօք եղծական
Օ՚մայլէի ազատ 'ի մէջ հանգստեան։
Բայց յանկարծ, աւաղ, սրով անգութ մահուան
Հատաւ թել կենացս, անկայ 'ի կործան
Յանլոյս, լռակաց խորին յայս տապան։

Ահա եղեւ վերջին իմ կենաց բաժին,
Ըստ անխռով հանգչի իմ ոսկերց փոշին։
Երթ, յայտնեա՛ աստէն զ'ի խորս գաղտնին,
Որոց հող, մոխիր են նիւթ առաջին։
Երթ, յուշ լեր անձին, խորհեա՛ զվերին
Զայն օր, յոր զերեարս տեսցուք 'ի յերկին։

## ԿԷ.

Իբրև զգարնան ցօղ առաւօտեան,
’Ի վերայ ծաղկանց եղէ յերևան.
Բայց արեգական չ՛տարեալ ծագման,
Կորեայ նոյնհետայն զերթ անրջական։—

Զի՜նչ օգուտ վասն իմ մեծածախ արձան,
Ո՞ր այս գովանի, պճնազարդ տապան,
Երբ ես փաթթուլթեալ ’ի չնչին պատան՝
Թաղիմ աստ ’ի հող անշունչ, անկենդան։

Օգնել ո՛չ զօրէ ինձ զարդ արտաքին,
Ունայն են և անպէտ վաստակք գլխոյին։
Բացէք, և տեսջիք զիմ զդիրս ներքին,
Ուր սաղաւկ և եթ կմախք գտանին։

Յիմ բոլոր ընչից տուաւ ինձ բաժին
Կտոր կտաւոյ ’ի վայելս վերջին.
Բայց, աւաղ, և այս իմ բարիք յետին
Փտեցաւ. մնացի ես մերկ բնաւին։

Արդ՝ ո՛վ մահացուք, դի՛ք ձեզ յօրինակ
Զայս յամէն բարեաց զրկեալ զիմ վիճակ։
Հոլովեալ աւուրց և ձեր շրջանակ,
Հեղցի ձեր վերայ դառնութեան բաժակ։

Մի՛ 'ի գործ դնէք յօգուտ ձեր մարմնոյ
Զգոյս, զբարիս պիտանիս հոգւոյ։
Մարմին եղծական է բաժին հողոյ,
Կերակուր որդանց, ըստ վերնոյն վճռոյ։

Զինչ մխիթարանք զկնի մահուան,
Եթէ ոչ բարիք առաքինական.
Ոչ մարմնոյ անպէտք, որք չե՛ն մնացական,
Այլ հոգւոյն անանց 'ի դար յաւիտեան։

## XIII.

Մա՛հ է, որ եհատ զիմ կենաց զթել,
Արկ զիս հողապատ յայս դամբան անել.
ՅԱդամայ ցայս օր նա միշտ անարգել
Իշխէ մեզ, նմա չէ հնար յաղթել։

Ո՞վ է, որ չ'անկաւ հարուածով մահու,
Ո՞ կարաց նորուն կալ ընդդէմ զօրու։
Նա խլէ բռնաւոր զոհս յամէն պահու,
Չ'նայի 'ի վիճակ մեծի և փոքու։

Վա՜յ, որք ոչ կանուխ 'ի մահ պատրաստին,
Կամ՝ կարծեն ինքեանց դաշնակցիլ բաղդին.
Մահ նկուն առնէ զաշխարհ գլխովին,
Անցցէ և բոլորն հանգոյն ստուերին.

Ազով են լի մեր փառք, յարգանք, պատիւ,
Մօտ է ընաւին աշխարհ նոր լրիւ·
Պատգարեալ կենաց ձախողակ անիւ՝
Պոկցէ վերջ նոցին միով վայրկենիւ։

Եհաս ինձ դառն այս խիստ ժամ օրհասի,
Սուզայ ես 'ի փոս մահու անմահի։
Նոյպէս ամենայն դիւրեաւ ապառի,
Այն, որ զայս վերջին զօրն ոչ խորհի։

Սապէս անցաւոր և դու իբրու զիս՝
Երբ հասցէ քո ժամ, մահու յաղթեցիս։
Մի՛ յուսար 'ի փառսդ, յանցաւոր բարիս,
Զորս գտեր, թողցես այլոց յաշխարհիս։

## ԽԶ.

Թուի՞ քեզ ինչ՝ այս իմ վիճակ՝ անընդել,
Կամ՝ անընական՝ այս հող տապան, խոր անել։
Ոչ, անցաւոր։ Սա է վերջին մեր հանգիստ,
Ուստի մինչ ցարդ բաց 'ի միոյն ոչ ոք ել։

Յառաւօտու ելի ողջ, խրախ քեզ նման,
'Ի գիրկս քաղցրիկ իմ ընտանեաց գգուական
Վայելէի 'ի սէր, 'ի կեանս անխռով·
Իսկ յերեկոյն եդայ 'ի յայս լռու դամբան։

Չ'է աստ գիշեր, ո՛չ օր, արև, ո՛չ լուսին,
Նա է տեղի մեր հանգստեան միշտ մթին:
Նա ընտանիք, ծանօթք, ընկերք մեր և հող,
Յոր լռու մնամք ձայնի փողոյն, յօր վերջին:

Ո՛ կեայ զխորդ, զինչ անցանէ յաշխարհի,
Մնայ անյայտ մեզ մեռելոցս ամենի.
Եկեսցէ օր, յոր բովանդակ յայտնապէս
Նա Դատողին մեծի փոքու գործ բացցի:

Լուր այս բանից անշունչ, լռիկ մեռելոյ,
Երթ և խորհեաց, դի՛ր 'ի Մերինն քո զյոյս.
Չափեա՛ զգործդ, մի՛ անհոգ լեր զբարեաց,
Զոր ունի տալ բոլորից յոյսն, կեանք մեր, լոյս:

Մի այդպէս շրջիր վսեմ, անվեհեր,
Ո՛ դու անցաւոր, իմ նախնի ընկեր:
Հայեաց յիմ դամբան, հա՛տ յերկրէ քոյդ սեր,
Զի և քո անցցեն կեանք իբրու ստուեր:

Ո՛չ արդեօք տեսեր զիս մինչ ցօր մահու
'Ի վայելս փառաց, վեհից 'ի պարու:
Ո՛չ ես փայլէի ստացուածովք, գանձու....
Իսկ արդ ո՞ւր նոքին, և զի՞նչ եմ յայժմու:

Մայրենեան մի յանկարծ եղ կենացս վախճան,
Զրկեաց յամենից, արկ զիս 'ի կործան։
Ուստի մերկ, անշարժ կամ լուռ յայս տապան․
Օգնել ոչ զօրէ ինձ աշխարհ համայն։

Սուտ է և չնչին քո կեանք գլխովին,
Թո՛ղ զայդ ստորին, սիրեա զվերին,
Չ՛է մեր հայրենին յանցաւոր երկրին,
Այլ յանանց յերկին, ուր և մեր բարին․

Լոյց եղելոց գոյ օր վճռատու,—
Կորիցեն բոլորք իբրու զիս մահու
Աղքատք, թէ՛ փարթամք, վայելողք գանձու,
Ստրուկք, թէ՛ իշխողք հողոյ և ծովու։

Սնապարծ ապա մի՛ աներկեան,
Յուսար անցաւոր դու 'ի կեանսդ ունայն․
Զի գալով գայցէ ժամ վա՛ղ, անագան,
Յոր մտցես և դու յայս մեր վերջավան․

ԶԷ

Իբրու գարնայնոյ հաճելի ծաղիկ,
Նո՛ր ես բողբոջեալ էի գեղեցիկ․
Յանկարծ ամառան հար զիս տօթ սաստիկ,
Ընկայ 'ի կործան յայս տապան փոքրիկ։

Ես ոչ յուսայի այսպէս դառնադէմն
Զրկիլ 'ի կենաց, սիրելեացս անդէմն։
Բնաստուր օրէնք են մեր օրհասին,
Ծնանիլ, մեռանիլ, դառնալ 'ի չնչին։

Յայսմ հետէ և դու թշուառ անցաւոր,
Մի՛ յուսար 'ի կեանսդ աստի աղցաւոր։
Թուեսցի քեզ նոր ուղիս հեռաւոր,
Յոր գալով հասցես 'ի կէտ վերջաւոր։

Նոյս դառն աղէտից ես և դու բաժին,
Նա է հանգստեան քո տեղի վերջին,
Ե՛րթ, զննեա ճշտիւ զչարս և բարին,
Մի՛ անփոյթ լինիր զկենաց վերին։

# ԱՌԵՂԾՈՒԱԾ:

(Թարգմ.:)

Չունիմ ընաւին ես ինչ ձայն, բայց անդադար բարբառիմ.
Վատթար այլ և բարիոք բարկանամ և գոհ լինիմ.
Գովեմ, վիճեմ, նախատեմ, սուտ և ստոյգ հռչակեմ.
Եւ 'ի տեղիս բիւրաւոր յանկարծ լսելի լինեմ:
Ես միշտ պարծոտ եմ վսեմ, կատակասէր, ծաղրաբան,
Զգօն, ուղիղ և տխմար, տգեղ եմ և գեղազան:
Յիւրաքանչիւր ես ամսոյ կամ յեօթնեկի վերածնիմ.
Եւ անյապաղ յետ ծննդեան հասարակաց վաճառիմ:
Հարուստ եմ յոյժ ես եղբարբք, այլ մի է մեր անուն,
Բայց յաշխարհի ոչ կոչիմք մեք միապէս հաստատուն:
Ծանեայք արդեօք: Միթէ ո՛չ: Կրկին անգամ յաւելցուք,
Մի որ 'ի մէնջ չունի մայր, բայց վասն այնր ձեզ ցուցցուք
Զերկերիւր հայրս խնամակալ, պատճառ մերոյ ծնընդեան,
Զոր ոք չկարէ համարել զրկանք կամ վնաս մեր ծագման:
Ես սպիտակ եմ և գորշ, թեթև, անշունչ, անկենդան,
Եւ կարի յոյժ համբաւոր կամ հռչակլի եմ նման:

# Ա.Ղ.Օ.Թ.Ս Ա.Ր.Ա.

(Եւրգծ")

Աղօթս արա մինչ քեզ օրհաս յաջոյն,
Տէր գոհուն և մի՛ ընդ բաղդ մեծամտիր·
Իսկ երբ տիրէ քեզ տրտմուն ցաւալի,
Դ. խիստ կարիս մաշի և սիրտ վշտակիր՝
» Համբերութեամբ տա՛ր, հեզացի՛ր, աղօթեա՛։

Երբ հալածանք պատեն զքե թշնամեաց,
Յանմիտ, անխոհ տժգոհուն մի՛ ածիր։
Մի՛ աղաչեր սուրբ Խնամարկուն զօրումած,
Լինել նոցա պատուհասիչ, վրէժխնդիր,
» Համբերութեամբ տա՛ր, հեզացի՛ր, աղօթեա՛։

Եւ մինչ նեղեն զքեզ վտանգք փորձմանց,
Հարստահար դժբաղդուե հնազանդեա՛ց·
Մի՛ տար տեղի բերտ, մոլեկան կրից չարեաց,
Այլ հե՛զ ղլոյս, տացէ բաժին քեզ Ա.Ծ։
» Համբերութեամբ տա՛ր, հեզացի՛ր, աղօթեա՛։

Եւ թէ թափին 'ի հզօրաց բռնաւորունք,
Մի՛ մարմնչէր 'ի զուր ընդդէմ զօրուն·
Նայլ յանդորրու հեղ ղարտասուս, և ծաղկունք
Քո տապչի ունին ծաղկել ղմնաղանս։
« Համբերութեամբ կա՛լ պինդ ղյոյս, աղօթեա՛։

# ԵՐԳ ԿՈՒՍԱՆԱՑ ԶՕՐԱԿԱՆԱՑ·

(Բայրն.)

Նուրբ երկնային, ընկա՛լ սիրելեաց
Քոց զօրականաց զաղօթս մաղթանաց.—
Մինչ դիր, լո՛ւր մեր գոհաբան ձայնի
'Ի մէջ քոց սրբոց հրեշտակաց խմբի։

Մեք սուրբ քո կամօք յամ տեղիս,
'Ի ձորս անմատոյց լերինս ահռելիս,
Խաչին յաղթութ թշնամւոյն վերայ
Նծեմք անդադար ղերկեւղ և զմահ։

Փառանց Պետրոսեան քաջ զգօնութեա
Մեծին մեծ պտուղ բերեալ Ռուսաց ազ
Նորոգ զօրութեամբ, մեծերիմ իւրեան
Բարերջանկութիւն տայ ժողովրդեան։—

Յաւակեց սրտիւ նա լինել բարեաց
Պաշտպան իւր զինու յաղթեն թշնամեաց·
Կործանէ 'ի հող յամառ հակառակս,
Պատրաստ է գթալ յիւրեանց հպատակս։

Արքայի սիրտ է Ա՜յ ձեռին—
Զայն է Աստուծոյ սուրբ օրէնք նորին·
Նա առաջնորդէ մեզ 'ի մէջ մարտի,
Պահպանէ զմեզ յաւուրս խաղաղի։

Տեառն է ա՛մ անդորր այլ և շանթք,
Պատիւ անմեղաց, լրբից ամօթանք։
Եւ առաջնորդեալք մեք մարտամբ նորին
Գ՛նամք առ անհաւատս լերանց 'ի սրտին։

Անտառք, աւազուտք, ծերպք և թշնամին
Տուան զօրութեանց մերոց 'ի քննին,—
Արժա՞ն եմք արդեօք հաւատոյ փրկչին,
Արժանի՞ որդիք մեծի արքային։

Ո՛չ լիցուք յամօթ հարց 'ի տապանի,
Երդումն Ռուսաց է սերտ, հաւատի.—
'Ի մեզ հարազատ մեր մօր յորովայն
Տուաւ մ՚աներմնէն ա՛նդուստ ընդ արեան։

Ա՛ծ զմեզ ուղղի՛չ, ընտրեալդ արքայի—
Արքայն Ռուսաց տան փառաւոր որդի,
Տա՛ր զմեր արծիւ յուղի ցանգական,
Յոր տարար զմեզ դու՛ ինքնին միայն։

Ուրանօր զսուր Թուրքս արծուի,
Դու խաղացուցեր 'ի լերինս Հեւսի,
Եւ հաւատարիմ` քո քաջ զօրական
Ածին զօրամանս,—թշնամիք փախեան։

Քանի՛ կրթութիւն է լինիլ ընդ քեզ,
Քանի՛ մարտ դնելն խնդութիւն է մեզ։
Աոյդ ես գլխով դու արծաթափայլ,
Արթուն, քաջասիրտ և յամն ծերայեալ։

Ո՛րպիսի ամոք գթով սրբազան
Տանիս դու չքնաղ զաշխատանս տաժան,
Եւ իբրու զհայր մեծաւ բերկրութեամբ
Բաշխես զարքունի տո՛ւրս այնմ` լիութեամբ,

Որ 'ի Տէրութեան ՆԻԿՈՂԱՅՈՍԻ
Մ՜ն հաստատեա՛լ օգտի կեալ կամի,
Եւ հնազանդ, հզօր ձայնի խմստաւն,
Կամիցի լինել բարեբաղդ համբաւն:

Ա՛ռկս մեր ամենասուտ առաքին մաղթանք,
Ողջոյն, անկեղծ մեզ պսակ, պարծանք—
Մա՛ն հաւատոյ և մնորմնութեան:
Ըմբէ, խնդացէք ընդ մեզ հօրք համայն:

Պահեա՛ զամն մեր, Ա՛ծ յամն երկար
Օրհնարեալ քն ծնեալն զԱ՛րքայն մեր և ծայր—
Որպէս զերկրաւոր տարս ձրից տառ
Նեղէր 'ի վերայ նորա լուլի:

# ԶԱՓԱԽՈՐՈՒԹԻՒՆ

(Բայրըն:)

Եթէ զկեանսդ ողջոյն կամիս անցուցանել աշխարհի,
Մի՛ յընդարձակ ծովու վերայ փախեր դու միշտ համարձակ.
Ոչ աւելի յափունս սեպաձև երկնասուզ դանդաղկոտ
'Ի մէջ քարանց ընդ նաւակին սեղմեաց անձինդ 'ի յամօթ:

* *

Որ հանդերձեալ տրոց բարեաց ազնուակից կոյր բաղդի՝
Ընտրել ինքեան համեստ միջոց նախամեծար համարի.
Ոչ յոսկեփայլ, չքնաղազարդ աւազատի բնակի,
Ոչ և յաղքատ զուեհկական, յանարգ հիւղի փանաքի:

* *

Միշտ առ նոճի երկայնաձիգ մրրիկ դիմէ ուղղակի.
Եւ աշտարակ բարձրաւանդակ, որ գագաթամբ իւր պարծի՝
'Ի վերամբարձ յիւր բարձրութեանց աւազագոյն տապալի.
Յորոտմանէ կատար լերանց յաճախակի հարկանի:

* *

Այր հանճարեղ ոչ վհատի 'ի վատ բերմունս աղետից,
'Ի հասանել պատահարաց զինի ընդդէմ յուսալից.
Այլ յերջանիկ խաբէպատիր նա դիպուածում պահպանի
'Ի փոփոխմանց նենգ անհաստատելի փոփոխ օրհասի:

* *

Ո՛չ միշտ նեղէ զմեզ ձմեռն մրրկայոյզ ցրտագին.
Գայ յաջորդէ նմին գարուն քաղցրիկ, զուարթուն խնդագին։
Այսօր աղէտ, վիշտ տրտմունք մաշեն զկեանս տանջանօք,
Իսկ 'ի վաղիւն ուրախարար դիպուած զմեզ լնու կենօք։

* *

Ո՛չ համապազ հրացայտ կայծակն սաստիկ թափով բորբոքման
Ապառնայ առնել հրձիգ զերկիր կիզել լափել զամենայն.
Բայց և յաճախ զթանձրանիւթ, կարկտաբեր ամպս ցրէ,
Զօդ ջինջ, պայծառ, զպարզուն անակնկալ մեզ բերէ։

* *

Լե՛ր անյողդողդ 'ի համբերել քո դառնաքաղց պատահման,
Մի՛ հաւատար և դիւրագայթ, պատիր բաղդի կեղծական.
Եւ զարմանս հողմով լցեալ մի՛ յապաղիր արձակել,
Զի հասանել դու կարիցես փութով դիտմանդ անվրգել։

# ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ

## Ի ՎԵՐԱՅ ՍԻՐՈՅ:

Բնանկարիչ:

Նայ՛ր, ո՛չ սակաւք 'ի հին բաղձափորձ, ձեռամբ հագ-
ներգուաց,
Յաղթեալ առ 'ի յիւրոցն սրտեւանդն զգածմանց՝
Թոյլ ետուն գրչաց
Նկարագրել զսէր յաւերժ արտասուօք փոխան մե-
լանաց,
'Ի լալկանս ողբոց յայտ ածել զաղմուկս կաթոգին
մտաց:
Նա՛ այլք առ կարծիս, թարց ճիշտ զգայուն ներքին
ազդեցման՝
Ա՛յ զի զսիրոյ ստուերագրութ՞ք լինին վիպասան,
Երգելով նորուն զգով կամ պարով կեղծեօք մտա-
ծական·
Եւ է՛ զի չէ վայր լինիլ ընտանի դժգոհ, ամբաստան:
Այն ձայնէ վայելս, գրգանս, քաղցրութե՞ զ՚նորին հըր-
ճուանաց,
Խրախուսեալ զմեզ 'ի հաւանութե՞ անոյշ տենչանաց:
Այլս պատմէ զոձիրս, բասրանս, զվտանգս դաժան
տանջանաց,

Սաստակս զախտալից, հող, զմետ բերմունս, զոր ծրնաւ այն բազմաց։
Սեպք խոստովանին, թէ այն է դիւր մեծ սրտի և կենաց,
Իսկ այլք պնդեն զոր զնա հիմն, արմատ ցաւոյ փորձանաց։
Ոմանք ընծայեն նմա յատկունիս արժանս յարգանաց,
Այլ միւսք ցուցանեն զկարիս նորին ժամս եղերանաց։
Նոյնպէս և դարուս քաջ բնագիտնիք չեղեն իսկ յօժար,
Տալ սահման, վճիռ հետազօտունց, որոց անդադար
Ջանին գիտել ճիշդ զսիրոյն որակ, թէ և յոյժ դըժուար·
Լուծանել զայս մօրս բնութեն գաղտնեաց փաթեթին ծրար։—
Մտեալ յայս խորհուրդ 'ի պարապ ժամուս խոկամ ես երկար,
Թէ էր նախնական հեռաւոր սիրոյ կոչին խելագար,
Կամ երգիչք նորին թուին ուշագրաւ, մոլի, սիրահար . . .
Խորհիմ· բայց իմ միայն խոկմունք երկուանօք թերի անկատար։
Յետ այս անորոշ, ընդունայն կարծեացս ծնանի նոյն հետայն
Յիս նոր ցանկութի — քննել, սահմանել սէր զիմ առարկայն։
Սիրեմ ես խոկմանցս, այլ ո՛չ ինքն ես իս լինիմ համաձայն,
Գտեալ 'ի նմին յատկունիս տարբերս միմեանց ներհակման։

Ուստի դիմելով առ փորձ դժնդակամդ եմ յուսով հաստատ,
Թէ տացես վճիռ իմ ներքին վիճի ճիշտ արդարադատ:
Արդ՝ հօր իցէ սէրն, զի և սա զնորուն ջերմունն ունի,
Որ երբ հրաւուն ինչ վառի և այրէ սիրտ, յոր սընանի:—

Փորձանաւոր:

Ոչ. հուրն է տարր ինչ շարժուն, տեսական, որ հե՛շտ շիջանի.
Սէրն աննիւթ, անշէջ, անտես, աներև, սրտի եթ յայտնի:
Նոյա պատճառին յաճախ աւերանք, շինուածք հրքանան.
Իսկ սոյա ամուրս հաստին շինուէք, յոր կեամք անսասան,

Վիճաբանութիւն:

Իրաւ. չէ՛ այն հուր . . . . Իսկ արդ՝ ջուր իցէ. զի որ պապակի՝
Մեղմէ զհուր ծարաւ, զովանայ նովաւ՚ի սիրտ և յոգի:—

Փորձանաւոր:

Ա՛հ. ջուրն է հեղուկ տարր խառն բնութ, և մերթ
վնասակար.
Իսկ օդըն աննիւթ, պարզ, անտարբերափակ ցանդ մեզ
օգտակար։
Նա այլ այլաբար, մերթ պաղի և մերթ սպառի, ցա-
մաքի.
Սա անյեղապէս մնանի օր քան զօր նոյյ, բարբաքի։

Գինոսինոսը։

Զ՛է սուտ և այդ խակ։ Աւրեմն օդ լցէ. զի սուր և արագ
Լինի ցուրտ կամ տաք, ներգործէ 'ի մեզ յար ա-
ներեւակ։—

Փոյշանաւոր։

Ա՛հ, ո՛չ . . . . Խառն է օդ, յողդողդ, շարժական և ոչ
միշտ յստակ.
Իսկ օդըն հաստատ պարզ, ջերմ, անփոփոխ նոյն
հակառակ։

Գինոսխոսդեր։

Եթէ չէ այն ջուր, ո՛չ օդ և ո՛չ հուր.— այլա ուր լցէ.
Զի բազմիցս զնոյն մնացէք զոհրա կարծեմք
խօսէ։—

Փորձառու։

Ո՛չ երբեք և այդ։ — Սուր մարմին մարդոյ հարուա-
ծով խոցէ.
Իսկ սէրն անհարուած գաղտնի թոյն վիրաց բեր 'ի
ներքս ածէ.
Օ, որոյ արտաքին վէրս ապաքինել չ'է ինչ դժուարին,
Բայց զոր 'ի սրտոյ խոց ներքին բուժել գոյ ան-
հնարին։

Բնախնդիր։

Որդ՝ թէ չ'է և սուր. միթէ նետ իցէ, զի սուր, թա-
փանցիկ
Մխի մեր 'ի սիրտ, ճնշէ զգայարանս բովանդակ,
սաստիկ։
Եւ երբեմն յաղթեալ բնուն զօրուն՝ կեանս զատէ
քաղցրիկ
Նուէ նողկալի, ենթակայ ցաւոց, կարճ և փու-
թանցիկ։ —

Փորձառու։

Ոչ եւ. չ'է այն և նետ, զի սա ձեռակերտ զէն, գործի
մահու,
Եւ յաւէտ դիմամբ ձգի մեօք առ այլս միայն առ
վրէժու։
Իսկ այն է անմխելթ, որ և թարց քինու զանմեղ զոհս
զինու,

Վրէժխնդիր:

Ո՜հ. թէ այն երբեմն բերէ մեզ ըզցաւ, որ մերթ մահ ծնանի.
Նչա թոյն է այն և կամ մահաբեր, մեզ ո՛չ պի-տանի . . . .

Փորձանաւոր:

Վնա լիցի և այդ: Չէ այն հեշտանկութ, և քաղցրիս յայտնի
Բուժէ մեր սրտից վէրս զանբերելութս խելու սպեղանի:

Վրէժխնդիր:

Նորդ՝ թէ այն ունի և զայդ յատկութի՞ ապաքինական.
Նչա աներկբայ է մեր խօթութեանց, ցաւոց դեղ, դարման:—

Փորձանաւոր:

Ո՜չ. զի չէ հեղուկ, զանգուած նիւթեղէն, այլ ան-տեսական.
Եւ յաճախ փոխի, բուժիչ զօրութի՞ք նորին վերանան.
Սատի սիրահարն, որ յայն անսասան լինէր ապաստան,
Նցաւ ցաւահոծ մ'չափք 'ի հոգի՝ կարի անագան
Որ 'ի յօր յուժոյ թափի, վտտի, կենօք անկենդան
Երբ 'ի բոխս եղեալ հալի և լինի ձմրակ կորստեան:

Բնախնդիր։

Իսկ թէ այն զմարդ մեղմաժամ հիւծէ, ճնշէ կա-
րեվէր,
Պատճառէ կորուստ բերելով զմահ, ուրեմն անվեհեր
Համարիլ պարտէ զայն երկրորդ մեր մահ կամ մա-
հու ընկեր․
Կոչելով զնա ատելուն իսկ, և ոչ եթէ սէր։

Փորձառու։

Ո՜ն անդր, չէ այն մահ, զի սա տրտմաբեր է ան-
գութ իշխան,
Թունաւոր, գերիչ, անհաշտ թշնամի, ատելի մարդկան․
Իսկ այն խնդաբար, հեղ, համբոյր ընկեր, մայր հաշտ
կեցութեան,
Հրահանգ դիւրուն, հրաշալի խրախոյս, կապ ընկե-
րութեան։
Մահու 'ի միմեանց անդարձ անջատիմք․ իսկ սիրով
համայն
Կեանս անցուցանեմք, կեամք միշտ միաբան, յանխռով
հանգստեան։
Նա արբուցանէ անխտիր ամենից մրուր դառնուն,
Իսկ սա զօշարակ ախորժ և անոյշ կենաց քաղցրուն։

## Ուշադրութ.

Այս զարմանազարդ ընտիր յատկունք իրաւունս ետուն
Կոչել քաջադէպ սէր արդարեւ սէր զնորայն անուն։
Ո՛վ մեծի հրաշից, քանի՛ զօրութիւնք նորին են յաղթու,
Հզօր, սքանչելի, ներգործող, ազդու քան զսուր
հատու։—
Որ խանդաղակաթ զգածմամբք հոգւոյ տածէ զայն,
վստահ
Հետեւի նորուն ընտանի օրինաց՝ նա կարէ անահ
Մատչել է յառաջ երջանիկ կենաց առ բաղդ գե-
րագահ,
Պահել յետ մահու զանուն անմահաց միշտ կենդան,
անմահ . . .
Հարք, մարք, քորք, եղբարք, ծերք, մանկունք, որ-
դայք, բարեկամք, ընկերք,
Օտարք և ծանօթք միակցին նովին ծննդեամբ տար-
բերք։
Ուր սէր երեւի՝ անդ նախձիրք, անհաշտ թշնամիք
զիւրեանց
Թողեալ զգաւնին չար ոխս մախանաց՝ կեան հաշտ,
անմնախանձ։
Մինչ զիւրն ձգէ նա զկայծ սիրոյ՝ սիրտք առ ՚ի
միմեանց
Գան յողջագուրել զիրեարս ՚ի գիրկ կաթոտ
զգացմանց։
Նուէր մի հոգի յերկուս բնակէ անձինս անբաժան,

Որք համախորհուրդ և կամայօժար մի միոյ փոխան,
Պատ զմնասուք, լինէին անձնազոհ թալց ինչ տրամբ-
ման,
Սարեկից զօրալ մեծամաց վիճակաց զ՛յդ սգան, խըռ-
դան։
Այս ինչ վայելուչ տուաւ մեր բնաւէ անդ 'ի սկզբան,
Որ չունէր սահման ինչ խմացական գոգ և ոչ վախճան.
Օհ գոյր անդսախն և աՀի յաւէտ, բայց թալց
հնութեան,
Կայր 'ի մեր նախնիս, կայ այժմիկ 'ի մեզ, կայցէ և
յապայն։—
Ո՛չ ինչ այժ, վասաւ՛, ոչ մեծամ միտք, խելք, հըմ-
տութիւնք խորին
Կարեն կալ ընդդէմ, զնել ինչ խափան բուռն ազդ-
մանց նորին։
Այս աշնուադոյն 'ի կիրս մարդկային անդին ձիր բա-
րեաց,
Արդելիչ ախտից, հակակիր կարեաց, հ՛իմն խաղաղ
կենաց,
'Ի հընուէն՝ որ ծախէ զամէն, լավլիդէ անյագ,
Պահէ համաշխարհս, քաջակարգ գործոց լինի օժան-
դակ։—
Արքայք, հպատակք, փարթամք և աղքատք, համօ-
րէն հասակ
Ընդ նորուն ըծով վայելեն բարիս 'ի բիւրատեսակ։
Բաղդը են անվթար, հեղ, արդար կանոնք օրինաց
նորին,

Օաղու բարս զգան, ցուցանեն յանձին, որք զայ-
նուէին յածին,
Ծ°նանին, Ճաշակեն քաղցրիկ զարդասխ զ°գացմանց կա-
թեկին,
Կեան խրախ, մխիթար 'ի սիրտ և հոգի մինչ ցպահ
վերջին։
Իսկ ոյք յայնմանէ կեան զուրկ, կուրօրէն տան հրա-
ժեշտ 'ի սպառ,
Հանդերձեն ինքեանց բիւր ցաւս աղետից մի քան զ°մի
վատթար։
Կամ ուստի բառնայ այն շնորհս իւր բարեաց զզարդս
կենաց,
Անդ և բանաւորք զգենուն զվարս անբանից գազանաց,
Ծ°նանին ցանդ փորձանք, վիշտք ծանունք, վտանգք,
մախանք, նախատանք,
Ահ, ատելուն̃, խռովանք, բամբասանք, բաղրանք,
թշնամանք.
Օ°բաղնուն ժողովուրդք, պատականին քաղաքք, փլա-
նին ապարանք.
Չքանան պետութիք, կործանին իշխանք, աղգաց
փառք, պարծանք։—
Ահ. տկար են բանքս, ոչ կարեն բնաւ լինել վիպա-
սան
Յատկութեց սիրոյ, որ գործ է լեզուի Ճոռում, պեր-
ճաբան։

## Աէրանոր:

Ճաճուկս զիս առնէ մինչ ցարդ ինձ անյայտ այդ սիրոյ
որակ,
Զոր 'ի Լերոյ, տեսոյ կամ փորձիւ ծանեայք ճիշտ
միօք յուզակ:
Բայց հիմա՞ չնայք և զայնր սիրոյ փորձ, զչափ,
ճաշակ,
Որում անկասկած լինի զ°ուտ համակ չափահաս հա-
սակ....
Նմա է սէր ձերայն, զորոյ բարձր առնէքդ զորակս
անապակ,
Ո՞ր ապ՜ այն յոյր սակս Նուայեն սերունդ ստեղծա-
բովանդակ:
Այր էք դուք ծնունդ, ո՞չ պտուղ սիրոյ Ճօրընախ-
եղակ:
Երբ լինէր աճումն, կատարումն մեր այն նախալճիւ վի-
ճակ,
Թէ ո՛չ փոխադարձ, մարդածին այն սէր անյագ, ա-
նուշակ:
Եւ զոր մեծարէ անագան աշխարհ մինչ ցմեք ժա-
մանակ:
Զ՞ինչ վայելք 'ի կեանս, առ ի՞նչ մեր ձգտեն վաս-
տակ, աշխատանք,
Ի՞ր փութան մարդիկ լինել ճոխ, յարգի, և յի՞նչ
պէտս այս կեանք:

Մի՛թէ, շարժութիւն չէ՞ նոյն սէր եւ միակ մեր սփոփանք,
Ո՛չ արդեօք թարց այնր ոչ լինէր հրճուանք, չէ՛ք հաճոյականք։
Ո՛հ. սէր ձերային ո՛չ եւս զօրէ լինել հաւասար,
Կամ գէթ նմանիլ սիրոյս զուարճարար, հոգւոյ գերեվար։
Ոչինչ ճոխութի՛ւն, բարեկեանք, յարգանք, փառք նախամեծար
Կարեն զիս զմայլել, նման սիրելւոյս առնել մխիթար։
Յեւայլն սեւուեց նա միակ իմ սէր, խելացս թոչփարար,
Զարդ կենդանութե՛ս, արգել աղետից, ցաւոյս ճար, հնար։
Նայս անգին իմ գիւտ, գերընտիր հանքաց ակն, աղնիւ գոհար
Կշռէ զի՞մ, բայց չ՛արժէ զնա բովանդակ աշխարհ։
Ո՞վ մեկնել զօրէ զիս ՚ի սիրելւոյս, որոյ չ՚նաշխարհիկ
Քաջաձեւ, նուրբ մէջ, սիրակաթ աչք, յօնք, ժպիտ դէմք բարեբիկ,
Մետաքսեաց գիսակ, ձիւնափայլ ուսք, ձեռք, գիրգ, ապխտակ, փափկիկ
Թողլէն զիմ զսիրտ, դնեն խո՛ր յոգւոյս կրից սիրոյ զինիք։
Զ՛ինչ յատուկ վայելս են զմայլիչ քան զայն, զ՞ոն այլ հաճելիք
Իբրու զգրգանս, յոյս ցանգ վայելեն սիրահար մարդիկ։

Ո՞ կարէ յայսմիկ 'ի կեանս փութանցիկ կոչիլ երջանիկ,
Որում ոչ տուան անձկալի սիրոյս հոգեզուարճ բարիք։—
Հապա՜, զի՞ կայք լուռ ․ ․ ․ ․ ․ Պատմեցի զամէն, զոր դուք դատէիք։
Ասէք յայս հանդէս, տո՛ւք պատասխանի ինձ տաէ՛ն այժմիկ։

Աղչփաա։

Զո՛ւր կարծիս թագչիլ 'ի խաւն յախտալից խուժմնաւ վայրապա՛ր․
Նայէ քո սէր յիմար ծնունդ է չար կրից, անխոհ սիրահար։
Զի՞ ջանաս լինիլ այլոց ուղեցոյց աչօքդ լուսագար,
Կա՛մ բուժել զցաւս, երբ ինքդ ես ծմբեալ, ձեռատ, ցաւագար։
Նա՛ց զքո վիճակ տարփածու, կնամոլ, մի՛ անմտաբար
Գովէր զայդ քո սէր որ արարն զքեզ մոլեկնոտ ախմար։
Հարեալ ես 'ի սէր թմբրաբար զլխոց գեղատես կանանց,
Տածես խո՛ր 'ի ներքս բոց զախտաբորբոք, ժահաշարժ նախանձ։
Դու զմայլիս գեղոյ լեալ ծառայ, զերի՝ համարիս քեզ զանձ,
Պաշտես սրբուապէս զայն կանգնեալ յարձան սնոտի պաշտամանց։

Զի՞նչ են զգածմունքդ, ո՛չ խուժադուժի, կամ պտուղք չարին,
Յորս մղեալ սիրես, յարգես զատելին, ատես զբարին։
Նա՛ զոյգ է սիրոյդ, դրժես օրինաց, գանձես մեղս անձին,
Ցաս տեղի նմին, որ ուտէ, մաշէ սիրտ, կեանք զլխովին։
Գիտեմ, փորձ անձինք կոչեցին զգեղ պա՛տրուակ, քող աչաց,
Որոգայթ սրտի, խաղեալ չար կնոջ, Թունաբերոյ մնաց։—
Մի՛ ընաւ մոռանար յայտնի աշխարհի զայն ազդու դիպուած,
Յոր սեաւն կանանց անկաւ մարդ նախկին յանդունդս խոր մեղաց։
Յաւէր են 'ի ընէ սիրել սուտ, փարել պատրանօք,
Ա՛յ քեզ, որ նոցայն հաւատաս սիրոյ անխոհ, կոյր աչօք։
Ոչ կարես փոխել զոր տուան նոցա բնական օրէնօք,
Կամ ուղղել զնոցայն վարս խոտոր, պատիր խրատուք կամ խելօք։
Ո՞ր է օգուտ այն, զոր բերէ քոյդ սէր, յանցանք Թէ՛ վաստակ,
Զորս տանես յանձին տափածու բարուք յամէն ժամանակ.
Թէ զրկանք յընչից կամ վատթար անուն, կամ եղք դժնդակ,

Որք քո դաւանորակ են սիրոյ պտուղք, արժանին պը-
սակ։—
Ապա՝ եկ, ուսի՛ր և դու զանբիծ սէրս զիմ խորհուրդ-
յատակ,
Ընկա՛լ զիմ խրատ, առե՛ա սէրդ զըստգիւտ, կա՛լ
զիմ օրինակ,
Մ՝ի հեռաւաբար չարեաց քոց կրեց մոլի խառամեան,
Ցուցանէր այլոց զեղծ պատկեր սիրոյդ վայրէ, դը-
ժնդակ։—
Սէր վայելչական է սէրն առ Ա՟Ծ, որ նախ ՚ի մեզ սփ-
ռեաց,
Սէր առ մերձաւորն, գրեալ ՚ի Ս՟Բ Գիրս անխառն
օրինաց։

# ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ։

Ա՜խ, փութով դեղ՝ տեսից վերստին,
Երկիր ցանկալի,— Արցախ կանթողին։
Ուկից քոյդ լերանց յուռթի բարձրաւանդ,
Ի դաշտանեօք հոգւոյս 'ի պերճ դարաւանդ։
Ու՛ ուր քո գետոց դաշխին գոհալոց
Օ իմ բերկրեցուցէ զմայլեալ հայեցուած։
Երկիր զուարճարար հաճելի աչաց,
Աննմանք են քո այգիք, սեզ դաշտաց,
Խիտ մարգագետնիք և մացառք բլրոց,
Յակինթ և բասր ողկոյզք խաղողոց,
Ծաղկածին ծործորք դալարի հովտաց։
Կարկաչոտ վիժակ մանրառատ վիմաց,
Զբնաղ տեսարան ժայռից հին ամաց
Ներդաշնակ առուաց գեղգեղ եղերաց,
Հովանի ծառոց և ցուրտ աղբերաց,
Հրապուրեն 'ի զով զեփիւռ անցորդաց։
Ո՛հ. ես խաղա՞ք իմ անգութ բաղդի
Կամ դաւադրեալ յայս աշխարհ հեռի,
Ծառայ քոյդ սիրոյ, եղկելի գերի։
Ընթացք իմ կենաց, որ, ժամ և տարի
Յաւօք անցանեն յայս օտար երկրի։
Հեռու աւետից զգայուն սրտի։—
Ի քոյդ յիշատակ սիրտ իմ խանդակաթ
Թռչի 'ի ժամ մշտայ երգեալ զայս դիւաւտ,

Օ՜հ յիշատակս զիմ քաղցր Հայրենեաց
Պ՝եռելոցի հոգւոյս աղէտ տանջանաց։

# ԾԱՂԻԿ։

(Յարգէն)

Ի ձոր խառածառ յանտառս դու վայրիս
Բուսանիս ծաղիկ, այլ ոչ 'ի յայգիս.
Ծերբեմ, թէ ող զկեանս միայնակ ձանձիր,
Ա՛յ նորայն 'ի ցնորս խորամուխ լինիր։

Ընդ է տուերաւ ծառոց թանձրախիտ
Թաւամեալ եղծցիս, անցցես իմ բարիդ,
Ընդէտ փիձակիդ հզօր զօրութեան,—
Տալ քեւ զմայլել, խրախանալ մարդկան։

Համբոյր քո համեստ 'ի շիրմի վերայ
Թարշամեալ տերեւ անկցի ակամայ։
Եւ սոխակն վհատ անդ 'ի տուերի
Երգեսցէ տրտում, տխուր ցաւօք լի։

Երգեսցէ բազմին զաւուրց խնդութեանն,
Անցելոց յաղագս կամ վայելչութեան,
Նաեւ զգեղոյ դաշտից, զծաղկանց,
Մնացեալ միայն զքո մասն, որ անց։

## ՓՈՓՈԽԱՄՆՏ։

(Լարգտ. ՚ի պարոն։")

Առ ե՞նչ խաժոռ եղեալ զձեւսդ ՚ի ծընօտ՝
Դառնահայեաց ցուցանես դէմն ցասմնոտ։
Հի՞մ փոխեցեր զտեսիլդ ախորժ, հեզ, գթոտ,
Եւ ընդ ականք հայիս արդ յիս՝ խիստ, նենգժոտ։
Ո՞ր խռովարկու յարոյց ՚ի սիրտդ զայդ շփոթ,
Ազօտացոյց զիմ պարզ, պայծառ առաւօտ։
Խընայեա յիս, թող զառ ՚ի մահ տեսք դեղոտ,
Ցո՛յց զառաջին ինձ կերպարան, հաշտ կաթոտ.
Զի բուժակի գթածութեամբ քաղց ծանօթ
Հա՛րկ է գալ յօդն, որոց դեղոց են կարօտ։
Իսկ թէ թողցես զիս յուսահատ, խօթ, ջերոտ,
Զի՞նչ ապա քեզ գովեստ, փառք իմ մահաբօթ։

Ո՞ւր այն ժպտումն, թովիչ դիմակ զմայլարար,
Յորոց ՚ի հաղբս ունէիր զիս գերեվար,

Ո՛ր փաղեմ սէ՛րդ, դաշն, խանդ մխիթար,
Յոր անխառն վայելէի ես երկար։—
Իմ էիր լոյս, կենաց արեգ լուսաւոր,
Քեւ ես կեայի պայծառազուարթ առող մոլար։
Արդ՝ զի՞նչ առիթ, զի յեղակարծ լոյսդ վառ
Շիջաւ անժամ, արկ զիս 'ի սպառ ընդ խաւար։
Եւ մատ քան զայս՝ — մեծ ես աշխ սոսկ է վայր,
Խիստ զայրութից բերես զկայծս շանթահար։
Օ՛ի չերկնչիս զերկիւղ արդար մարդկաբար,
Ընդե՞ր անխնայ ածես զիս յայս պատահար։

Գիտեմ, զի այս դժդմնիչ տեսլեամբ խաբդաւան
Հնարս նիւթես զաղտնեացդ առնել զիս անծան։
Յայտ է, ձգնիս խզել զսերդ բազմամեան,
Տալ 'ի բաժին զիս հեգս մահու կորստեան։
Նա՝ յայս կէտ եղէ 'ի քեզ ապաստան.
Խիստ է անխիղճ այս դատակնիք քո ցասման։
Թո՛ղ, աղաչեմ՝ զայրոյթ սրտիդ յայս վայրկեան,
Եւ մի՛ ցասնուր, այլ դա՛ր առ խղճական.
Տե՛ս ո՛ զիս արկ յայս կրից յարկած փորձութեան,
Մի՛ թէ ո՛չ դու՝ երբ ես ազա՛տ յանբծութեան,
Յանմեղ 'ի տիս յընդդոյր կայի հանգստեան՝
Հեղեր յերակս սիրոյ զարիւն եռանդեան։

Ո՛չ դու յառաջն զիմ առնէիր զհաճոյս,
Տայիր սփոփանս, իմ էիր յոյս, քաջ խրախոյս։
Հի՛մ զիս զրկեալ 'ի բաղձալեաց հայրենեացս։

Նօտեր 'ի վիշտս ծանանց ցաւոց դառն անյոյս։
Մէ ես հլու կամացդ, բաց եմ կարեւլոյս
Զմնայեցի յուշինչ 'ի կեանս, յինչս և գոյս։—
Դու գիտէիր զկամս, խորհուրդս, զիմ սիրոյս,
Ընդէ՞ր յառաջ տայիր խոստումն, իսկ այժմուս՝
Թխաեալ դաշինդ, խրախուսանաց բարեյոյս՝
Զարկաց զվէրս դնես 'ի մէջ խոր հոգւոյս,
Թողլով յաղէտս զիս վշտաց տարակոյս։
Մինթէ 'ի վարձ միամտութեան սէրս սիրոյս
Հանդերձէիր զայս դառնակնիք խիստ վշտոյս։

Նոր՝ զի՞ կայր քեզ նենթել չարիս ինձ դաւանի,
Որսալ սիրով, զարկանել զիս բղձեանի։
Ն՞յէ եր վախճան ուխտի խոստմանս քո բանի—
Լինել ինձ միշտ յոյս, ապաւէն, հովանի—
Յանդիմանեամ, եթէ կամացդ, հրամանի
Նորէ Է՞ դէմ,— խիստ պատժոց եմ արժանի։
Մի՛ մերժանէր տալ վէրք սիրոյս կենդանի,
Յո՛ւշ ած զանցեալսն, դարձ 'ի խղճի գութ նախնի։
Իսկ թէ անսաստ ստախութեան յանդգնի,
Նա բառնել զիս զանմեղս 'ի զուր, բա՛ յայտնի,
Թո՛ղ ինձ զայս նուագ, զերգ 'ի սրտի բերանի
Դառնալ առ յոյսդ, ցո՛յց սէր դարձի, գութ շնորհի։—

# ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ.

Դարձեալ տաս աչօք դէմ իմ յանդիման ձեւանայ
յարձան
Պատկեր հրեշտակիդ, հայելի հոգւոյս, զ՚գալեաց
խրախճան:
Ի տիպ սքանչելի տեսանեմ զքո սիրասուն ժպիտ,
Օ՛ մայլիմ հայեցմամբ յերեսս քո համեստ, հրճուալի
վճիտ:
Ի քինջ այերք չեն այնչափ փայլուն լուսաւորք երկ-
նից,
Իբրու Թափանցիկ լուրջ աչաց քոց լոյս սրտածուխ
շողից:—
Նոր ծնունդ առեալ լուսնոյ ունի ձեւ գեղանիշ կամար
Սաղնիս տեսանես,— սեաւթոյր յօնիցդ, խելացս գե-
րեվար:
Հաղուագիւտ հանքաց ընտիր մարգարտեայ շարուած
ատամանցդ,
Կարմրերփեան կոկոն նորաքաց վարդի,— գրաւթիւն
շրթանցդ,
Հիւսուած գերդ հերացդ, պսակ Թագուհեաց, դի-
տակ պանծալեաց,
Օ՛ մայլեն զգերիս, կամ լուռ յափշտէ ՚ի շփոթ
կարծեաց:

Թմրեալ զզայութիւնս նուաղեալ զիմ յուշ տկար դը-
տանեն,
Չ՚հաւատամ աչացս, յալիս քննութեանց միտք իմ կորնչին։
Բայց խորախոյս դիմացդ քաղցրիկ, սիրելի, համեստ
հայեցուած։
Ցնդէ զթմրութիւնս, զիմ վերականգնէ զուարթութիւն
մտաց։
Յայսմիկ վիճակի լուռ, անշարժ հայեմ վերստին,
Կենդանի պատկերդ, թովիչ քո դէմք, ձեւ հանդէպ
իմ լինին։
Տեսեալ յաչս քո զզգացմունս սիրոյ, զխոկմունս սրտի,
Հաստատիմ ՚ի միտս, ոչ եւս վհատիմ, խնդայ իմ հոգի։
Յետ մտադիր նկատման մատչիմ ՚ի վարանս նոր
երկբայութեան,
Թէ չերա՞զ է այս ներկայութեան խնդալի վայրկեան։
Տրտմեալ նոյնհետայն սիրտ իմ լքանի, որպէս պա-
կասի,
Կարծելով թէ՝ եւ այս իմ բաղդ փութով անցանել
ունի։
Զո՜ւր ջանամ յայտնել զզգացմունս սրտի իմ հաւա-
չանօք,
Անյայտ զօրութիւն արգելու շնչոյս,—թուլանամ կարեօք։
Այս իմ կացութիւն կարի զիս նեղէ, լալ եւ ոչ կարեմ,
Շարժիլ կամ խօսիլ ոչ ինչ զօրելով յոգւոց
ելանեմ։
Իբրու դի անխօս, անշարժ եւ անշունչ անկեալ ՚ի
տեղւոջ,

Նմանրուն ցաւոյս, խստուն պահուս զգամ՝ 'ի հոգւոյ:
Շփոթեալ 'ի միտս, զիմ յիշողուն դարձեալ ես կարծեմ
Անամ նորոգման զօրութեանց զգածմանս, յուսով զիս տածեմ:
Նայէ յանկարծ աչայս պանծալի տեսիլ, քաղցրիկ նպատակ,
Աներանայ 'ի սպառ, և ես կամ լքեալ, տրտում և միակ:
Օ՜ արթնում, տեսանեմ՝ զի էր յերազէ ժամ այս երևման,
Հարիմ ը̄ զարմանս երերեալ 'ի մէջ մեծի խռովման,
Խորհիմ ը̄ երկար, անմռաց մնայ դիպուածս կորստեան. . . .
Ո՛հ, եր վաղանցուկ են մեր բաղդք, բերկրանք, ժամք ուրախութեան:

## ԴԻՊՈՒԱԾ:

Մինչ ցայսօր յիշեմ զանգինն յիմ 'ի կեանս զայս պահ երջանիկ,
Յորում արժանի եղէ զառաջինն տեսոյդ քում քաղցրիկ:
Այս անակնկալ դիպուած աջողակ, թէ և վաղանցիկ,
Անջինջ դրոշմեաց յիմ սիրտ սուր գեղոյդ խորամուխ կնիք:

Ուր և յոր ձգեմ ես զիմ հայեցուած, անդ միշտ քո
պատկեր
Ճանդէպ ինձ լինի ՚ի տեսլ բոլորեալ լուսոյ անստուեր.
Ուղղաձերձ հասակ, սևաթոյր աչք, յօնքդ, սիրուն
սիրոյդ թեր
Դիւրեն ու աչօք վերալից սրտի, անձինս փշամնքեր։

* *

Յաւէր պանծալոյդ,— ընկեր միութես, ուսուցնորդ հո-
գւոյս,
Որպէս սաթ, մագնիս հզօր միշտ քաշէ յինքն զսիրտ
գերւոյս.
Դու հանճարական միակ ուսարկայ, աչացս յստակ լոյս.
Չև եթ ակնունիմ ապրել խնդութբ, ով կենաց իմ յոյս։

* *

Եհար սուր սիրոյդ զիս ՚ի սպառ ՚ի սիրտ ՚ի կրծս աղաղ,
Սեր քո և է ինձ դեղ, սպեղանի ցաւոյս անփարատ։
Որոշեալ է մտօս խորհել զծամուս պարտիմ անընդ-
հատ,
Թէ երբ ուսարկայդ մնածմանցս լեցիս Ըիս անան-
ջատ....

* *

Սրտով հասանել տենչմանց սրտի է անհընարին,
Այս ծածկեալ զիմ տագնապ հոգւոյ, զախտ, կա-
րօտ խորին,
Մնամ անխափիշ անհամբերութեամբ տեսութեան կըր-
կին,—
Ընդ քաղցրութեան զրկել զքեզ.... տալ զիմ շունչ
վերջին։

# ԵՌՆԵՐԿԵՅ ՍԻՐՈՅ.

Գեղեցկահայեաց և շքեղադէմ,
Ընման Վարդենի տընկեալ 'ի յԵդեմ,
Յեւայրն սեւից հրաշագեղ հրեշտակի,
Մարգարիտ ընտիր, ոսկեհուռ պսակ։

Ե՛կն արփիափայլ, պայծառ արուսեակն,
Տատրակ քաղցրախօս, աղու աղաւնեակ,
Նազելի փրփրածին, սիրոյ օթեւան,
Ծաղիկ զուարճալի 'ի դաշտ Եդեմեան։

Ընձղոմ կոլթող իմ թախծեալ սրտի,
Լսէր ողբոցս ձայնի 'ի քացուստ այսի.
Մի՛ թողուր զիս հեգ, տրտում ցաւագին,
Զրկել կենդանւոյն 'ի գանձէդ անգին։—

Ուրէ իմ մարդոյ, Եդեմեան սերունդ,
Եղեալ 'ի լուսոյդ սիրոյ նոր ծնունդ։
Ընչպէս մահացեալ՝ քեւ եմ կենդանի,
Միշտ կարօտ, գերի դիմացդ սխրալի։

Բարշես զիս աւքեղ հրաշալի մագնիս,
Հեռանալ 'ի քէն խիստ ցաւէ սրտիս։
Տես իբր գետօրէն վտակ արտօսրի
Բանեալ յիմ աչաց՝ առատ հեղանի։

Երբ նայիս ախորժ աչօքդ յերկինս,
Գիրգ, փայլուն դիմօքդ 'ի զմայլեալ գերիս,
Խրախացեալ ը̄ այն 'ի նոյն իսկ նուագ`
Ափշիմ, զմայլիմ գլխովին համակ։

Հեւանալ 'ի քէն սիրտ իմ և հոգի
Անձուկ կարօտով սիրոյդ խոշտանկի։
Ազատեմ զ'գերեդ 'ի ծանր կապանաց,
Որ ոգետոչոր կամ 'ի մէջ վշտաց։

Սուր է սէր սիրոյդ, որով զիս հարեր,
Բուժեա զիմ զվէրս, զոր ինքնին եդեր։
Հասուցեր զաւուրս 'ի տիս ծերուն,
Կեաց ը̄ իս, լե՛ր իմ դու ցուպ զօրուն։

Այլայլմէ եղեալ պատմել ո՛չ կարեմ
Զայն, զոր 'ի հոգւոջս զգամ և տածեմ։
Տկա՛ր է իմ գրիչ ո՛չ զօրէ գրրել
Զախտ, ցաւ, զոր դու ինձ պատճառես կրրել։—

Ո՛հ, զի՞նչ լինէր, թէ դու ը̄ իս կէիր,
Գէթ ժամ մի և եթ զաղէտս հերքէիր,
Տայիր սփոփ'անս ինձ յայսմիկ տրտմուն,
Յանանց յիշատակ անմահ քո անուան։—

Աւաղ, կորնչիմ, չէք ինձ օգնական,
Ո՛չ բուժիչ վիրացս, ո՛չ ցաւոցս դարմանս։
Անգութ օրհասի եղէ ես ճարակ,
Աշտաց իմ աւիթ դու ես մի միակ։

Երդնում, զի սէր իմ է սնոտ, ջերմեռանդ,
Յանկամ ուր իցես՝ եղէց և ես անդ.
Օ՜հ քաղցրիկ տեսոյդ կենսատու կաթոտ,
Անյագ փափակմանք միշտ եմ ես կարօտ։—

Փութա՛ ո՛ իմ յոյս, եկ այժմիկ առ իս,
Հա՛ս ինձ յօգնութիւն, փրկեա՛ զեղկելիս.
Ե՛կ, նի՛ստ առընթեր հիւանդիս մահճի,
Յոգևորել զիս ՚ի ցաւոց միջի։

Թէ այցելութդ բուժի իմ այս ցաւ,
Օ՞հ առնես ապա զիս մահուան գրաւ։
Մի՞ թէ ես մեռայց՝ լիցիս երջանիկ. . .
Մի՛ յուսար և դու յայս կեանս վաղանցիկ։

Ո՞ւր է, ողորմեա՛ց զիս մխիթարել,
Թո՛յլ տուր ինձ յանյագ սէր քո վայելել.
Օ՜հ անցին տարիք, յորս յայս վիճակի,
Հալիմ և մաշիմ սիրովդ ՚ի հոգի։—

Որպէս լար ձըգեալ՝ 'ի ձեռս յետս ոչ գայ,
Նո՛յն անցեալ մեր դար ոչ վերադառնայ։
Յօժարեսցուք ապա և դու ո՛վ իմ սէր,
Խնայել 'ի թշուառս լինել մարդասէր։

Զի կամ վիշտ կենաց, կամ շրջան ամաց
Զբերկրութեան գերեզ 'ի գեղջ դիմաց,
Կամ խաղեալ 'ի քէն զգերիչ ծոցխ՝
Տացեն զայլ ուսիլ փայլուն պատկերիդ։

Լա՛ն ո՛ զեփիւռ զոր կամ ժամ մահու,
Մի թէ օրհասի չէ՞ք ծառայք հըլու։
Գո՛ւցէ այժմիկ եւս հասցէ օր կեանի,
Գրեթէ յիս խոստոց մինչ եւս կենդանի։

Ո՛հ, ես սխալեցայ անմիտ իմ հրեշտակ,
Զքա՛րդ կարծեմ զայս անմահ, համարձակ։
Մի՛ տացէ երբեք Տէր զայդ անանց վիշտ,
Զի ուրախ եղէց ընդ քեզ այժմ և միշտ։—

Զո՛ւր ընկերք, ծանօթք մերձաւոր, տառ
Հարցանեն զեկեալ, որում չէք հընար,
Թէ հետ օր աւուր պակասի իմ կար,
Զի՞նչ ախտ զիս այսպէս խեղդուլի առար։

Համբերայ լեզուս անդ ընդ քեզ լինել,
Զաղէտ իմ սրտի ոչ կարեմ յայտնել։
Ծածկեալ զայս խորհուրդ բանալ ոչ կամիմ,
Մորմոքեն աղիքս անզգայ լինիմ։—

Մի՞թէ յանխնան պարտիմ տառապել,
Սիրել, հառաչել, 'ի սուգ վարակիլ։
Համբերանց նշանակել ինձ ժամ պատմեն,
Զի եղէց հանգիստ 'ի բանտ ապաստան։

Թէ կամիս անել դու զանուն բարի,
Չ'անսալ սիրական առաջին չարի,
Պահել յաշխարհի յիշատակ զանմահ,
Ընկալ զիմ խնդիր, կատարեա փառահ։

Զինչ պէտք քեզ լինել բարեսիրտ, անգութ,
Խելացս, զգայութեանցս ով սրտիդ հմուտ։
Եւ փայլեցուք միմեանց սէր յանյագ,
Մինչ դեռ գոյ 'ի ձեռս պատեհ ժամանակ։—

Չ'են երբեք գովեստ կամ փառք քո անուան,
Զրկել 'ի կենաց զքո բաժինս մահուան։
Մեռանիլ յաւէժ է արդեաց մարդոյ,
Բայց բնական մահու, այլ ոչ ս̊ լով սիրոյ։

Միթէ են շրթունք պատառոտ և փառաց,
Գթալ, սպեղանի դնել իմ վէրաց։
Թէ գործ բժշկի է բուժել մեր զախտ,
Բուժեա՛ և դու վէրս հիւանդիս դժբաղդ։ —

Ո՛ թէ և գտցին դեղք բոլոր ախտից.
Այլ չէք երբէք ճար իմ վիրաց խոցից։ —
Ո՛չ, սխալիմ 'ի կարծս, գոյ և ինձ հնար,
Գութ, խիղճ՛ ցանկալւոյս, հոգւոյս գերեվար։ —

Ուրախ լեր ուրեմն սիրտ իմ տրտմաղգեաց,
Պատարուն յուսով խնդա՛, յանդորր կաց։
Մոռա՛ չարչարանս, զցաւդ բազմամեան,
Զի գոյ ժամ և քո կամաց կատարման։

Կարեկցեալ գթասցի նպատակ սիրոյդ,
Տացէ սփոփանս հեզ, թշուառ գերւոյդ.
Յայնժամ հեռէ լիցիս և դու բարեբաղդ,
Մոռասցիս զամէն նախկին վիշտ քո, զախտ։ —

Աստ թողում ըզգրիչ, ո՛չ կարեմ յերկար
Գրել ճիշտ զաղէտս, զի ձեռքս են տկար. . .
Զգայուն սրտի մնասցէ յայտնի
Չափ, պատճառ ցաւոյս, սիրոյս կենդանի։

# ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ։

Մինչ ընդ ամպով ծածկեալ կայիր՝ ո՜վ իմ լուսին,
Ես անհամբեր միայն լուսոյդ շողից նախկին.
Բայց 'ի ցրուելն քոյ յերեսաց օդոյ մթին,
Ի՞նչ թողեր զիս 'ի խաւարի հեգ տրտմագին։

Ո՞յր են յանցանք կամ զի՞նչ առիթ, որ ինձ արգել
Յանձկակարօտ 'ի քո պայծառ շողոյդ վայելել.
Օ՜հ թէ յառաջն քեւ լուսապատ ես անմրգել
Յանդ փայլէի . . . . զի՞նչ պէտք յայժմուս զո՛ւր զիս
զրկել։

Ա՛յս է ինձ մեծ, զի յիմ դրկաց սէր ապստամբ
Կորզեալ զքո լոյս անձկալին, փոխեաց մութ յամպ։
Ինձ չէ հնար այլ եւ պարծիլ ձրիցդ մասամբ,
Որով կեցեալ, միշտ շնչէի կենօք ողջամբ։

Սա չէ՛ր վայել վիճակելոյդ բնուէ՛ շնորհաց,
Չ՛է եւ փախճման առ որ տուան քեզ ձիրք բարեաց.
Օ՜հ միշտ 'ի քէն բաշխիլ պարտէր լոյս իմ կենաց.
Բ՜ն է հնար ինձ կեալ խոլմ 'ի մէջ վշտաց։

Ի՞ն հարկանես մեծ երաւանցդ 'ի գործ դու քան,
Թողուս ծածկեալ, մնյայս զատատ պարգեւս բնուե.
Գիտեմ, իսկ 'ի մեզ զամէնն զարու շրջան . . . .
Յանկարծ բնաւէն ամփոփեսցես զձեռս ունայն:

Արտաքէկ հեգս յայսմ հետէ լռեա ու անշունչ,
Զայնին լուեալ անխիղճ՞ բաղդի՝ զիմ զհեծունչ,
Օ՛ աղէտս պարտիմ կրել յոգւոյս հեւլ 'ի մռունչ,
Անմխիթար ողբալ, տալ զիմ վերջին զշունչ:

ԳԻԳՈՅԱԹԻԻՆ:

'Ի մէտ բեր՝ սիրուհի, արա դատ դու զաղդար,
Ո՛ այնչափ երբու զիս՝ սէրտ սիրով, քեզ յերկար
Օ՛ եւր համդեստ, բաղդ զփառս կուրօրէն զոհ արար,
Եւ զհարկս, ծառայեաց քո գեղոյ գերեվար . . .
» Առաջմբ զերջանիկ անցեալ ժամն մխիթար,
» Յոր անյագ զմխեամնք փարեաք անդադար:

Մի՞թէ դու յանհաստատ բարուց քոց ակն ունիս,
Գտանել փառս անուանդ կամ նոր ինչ զբարիս։
Յիշեա՛ զայն քո խոստմանն սրբազան զպարտիս,—
Սիրել միշտ փոխադարձ սիրոյդ հեգ զգերիս։
» Ուրացի՞ր յանխնայս, դու կամի՞ս թողուլ զիս
» Զեւանդեան զբարբառ, զոր ածեր ՚ի հոգիս։

Ուստի՞ դու գտեր նոր զայդ տեսիլ բարձրայօն,
Ո՞ր սոսկ անխեղճ եդ քո կամաց զայդ կանոն.
Դու չէիր ուխտազանց, նենգ, պատրող, անգթօն,
Ո՞ փոխեաց պաշտելին քո զսէր զիմ կրօն . . . .
» Զլացի՞ր դու զամէնն, ընկալի՞ր սէր դողօն,
« Երբ արեւ իմ կենաց դառնայր յիւր հորիզոն։

Ըա՛մ, է՞ր յետ բազմաց ամաց զիս ուրացար,
Ե՞ր թողեր մարդկութեան դու զօրէնս անկատար։
Մի՞թէ քեզ էր վայել զիս անմեղս վայրապար
Թողուլ, նո՛ր որոնել ինքեան զայլ սիրահար։
» Զայրացի՞ր յիմ վերայ, սա՛ էր դու դարձար
» ՚Ի սիրոյդ, որ էր միշտ իմ հոգւոյ թովչարար։

Զի՞նչ այլ եւ ես պարտիմ առնել քեզ բան սրտի,
Երբ այդպէս դու զամէնն մոռացար սիրուհի։
Մնա՛յ ինչ ինձ հնարին առնել քեզ հաճելի,
Երբ մինչ ցարդ ո՛չ ծանեար զոր սիրոյդ ես ցուցի . . .
» Ըունացի՞ր զօրութեամբ իմ սրտի յաղթահար,
» Ընկալցի՛ս ՚ի Վերնոյն զարժանին զվճար“։

## ՀԱՏՈՒԱԾ։

Յեռանդեան բորբոքէ անմիտ, սուտ ցնորից,
՚Ի յոգի ծխախառն կորուսիչ խիստ կրից,
Ետու հարկս պաշտաման գերեվար հիացման
Սիրուհւոյն թուխ աչաց բուռն հզօր զօրութեան։
Մատուցի զոհ նմա զտանջանս սրտի,
Եւ զտիւ զգիշերս ես նմա նուիրեցի. . . .
Բա՛մբէ· այն էր աշխարհ գիւթական երազոց,
Ունայն էր սուտ իմ յոյս, այլ տանջանք ծանրանոց։

## ԱՂԵՐՍ։

Մինչ ցնորք վառեալ սիրովդ, ծածուկ ՚ի հոգի,
Պարտիմ տանջիլ, մաշիլ մեղմով՝ սիրուհի։
Ե՞րբ այս ցաւոյս դիցես վախճան տենչալի,
Ակնկալեալն ՚ի վարձ սիրոյս կենդանի։

Որո՞վ խղճիւ, տա՛ հայցեմ՝ անխտիր
Տանջես դու զիս այսպէս յերկար, ՚ի նանիր։
Բա՛ւ է, ցո՛յց գութ, լո՛ւր աղերսից մտադիր,
Բուժեա՛ ընկերքին զիմ ցաւ սրտի ախտակիր։

Սէր քո թափանց անցեալ ՚ի սիրտ իմ անմեղ,
Նորորոգ[illegible]րղձի զջերմ արիւն յերախս հեղ.
Իմ կարծիք էր, թէ այն տուաւ ինձ ՚ի դեղ,
Բայց դառն որակ նորայն եարկ զիս ՚ի նեղ.

Ո՜հ, այս վշտաց սաստկիլ չէր ինչ դժուարին,
Եթէ ՚ի վարձ նոցին լինէր ինձ հնարին
Ընդամ և եթ առնուլ սիրոյդ զբաժին,
Զոր համարիմ մեծ քան զգանձ թանկագին.

Սիրով արկեր զիս յայս աղէտս տանջանաց,
Պատթով բռնեալ խղխայթս սրտի իմ վերաց.
Ո՛ւր աղեխարշ իմ ողբաձայն մաղթանաց,
Թո՛ղ ճաշակել ՚ի քեղ պտուղս հրճուանաց . . .

## ԱՆՋԱՏՈՒՄՆ.

Վերջին տեսութեան է մեր այս վայրկեան.
Իմ երջանկութեան է այսօր վախճան . . .
Ափսոս, զո՜ւր կորեան վստահք բաղմամեան,
Զոր տարայ դաժան ցաւովք եւանդեան.

Ինձ զի՞ էր պիտոյ՝ Թարց անխառն յուսոյ,
Սաւիղ հուրբ սիրոյ, դժգամնի հոգւոյ
Տալ 'ի զոհ գեղոյ, ապա 'ի վերջոյ
Զրկեալ 'ի խնամոյ՝ ենթարկիլ ցաւոյ:

Յաճախ իմ կենաց, փոխան հրճուանաց
Պէտ եւեն չարեաց բերմունք վարձանաց·
Հնար փրկանաց էր սիրոյս պարձուած,
Բայց անկարծ դիպուած և զայս բաղդ խլեաց:

Զուարթուն, ամոք հրճուէի կենօք,
Մխիթար, անհոգ սիրոյդ բաղձանօք·
Նոյլ այսօր նորոգ լցեալ վատ վիրօք՝
Մերժիմ արտասուօք ակամայ կամօք:

Որպէս յետ երկար ցաւոց չարաչար,
Թողեալ անկատար զսէրդ Թով չարար,
Երթայ ցաւագար քո հեգ սիրահար
'Ի յերկիր օտար, լալ անմխիթար:

# ՀԱ՛ՆԴԻՊՈՒՄ՛Ն։

Նա՛, ուստի՞ գաս սիրելի պանծանօք լի, սիգաճեմ,
Ուստի՞ գտեր սիրոյ հրաւէր զայդ նոր պատկեր պերճ, վսեմ։
Ո՞յր սէր սուր արկ 'ի տխուր քո սիրտ զհուր եռանդեան,
Որ 'ի շաղփուն դէմնդ սիրուն վառի թաքուն յայս վայրկեան։

Ո՞ւր էիր դու, որո՞յ քաղցու բանիւք խրատու փոխեցեր
Սերտ քո զսէր, որոյ նուէր հոգի իմ էր, նաև տէր։
Կանգնեցայ առ ժամ, թող և անգամ հեգս անխնամ 'ի հոգւոյ
Տաց զպատկան իմ հիացման զոհ պաշտաման քո գեղոյ։

Տէ՛ր ճարանօր էիր այսօր, ճոր գտեր նոր քեզ գերի.
Նա՛, որո՞յ մնայիր յուսոյ դու 'ի տեսոյ օտարի,
Որո՞ւ նորոգ զայլ անփորձ ոք զըլրացաւ լիկ զոհ գեղոյդ,
Թէ՛ խնճ գերւոյդ յայտնել զքոյդ սրտի սիրոյդ մէջ անփոյթ։

Ես գիտեմ դու չ՚զգաս զազդու սէր այս դարու ե-
ռանդնոտ,
Բայց եր՛ փոքու ժպտման քաղցու գէթ յայս պահու
զիս կարօտ
Թողլով անխնայ, մատնես անմա՛հ Թշուառս ՚ի մահ
կորստեան,
Երբ դու զանդրաւ կենացդրաւ ճանես ընաւ սիրական։

## ԳՈՂՏՆԻՔ։

Միթէ մոռանալ մարթ է, սիրո՛ւհի՝ զայն օր հեռաց-
ման,
Յոր անակնկալ տեսաք զմիմեանս ՚ի երեկս ՚ի տան . . .
Ընդ ինքնին սիրով յաղթեալ՝ համարձակ ետուր ինձ
նշան,
Թէ քո առարկայ մտախոհուեդ եմ ես միշտ միայն։

Որ բան կամ լեզու զօրէ պատմել զիմ խնդութ՛ի պահու,
Յոր վիճակեցաւ ինձ նստիլ ը. քեզ Թանկագին գանձու։
Ահ. երբ մտածեմ շքալի իմ հոգի, Թէ ո՜պ քաղցու
Բանիւք յիշէաք մեք միմեանց զսէր եռանդնոտ ազդու։

Սուտ էին անոր հրճուանք խնջոյից բաց յայն դէ-
պուածոյ,
Երբ մեք ոսկեայք մեռեանց հայեցուած յառաջացոյց սէ-
րոյ։
Սեղանն էր վկայ մեզ.... Երջանկուն, բերկրանաց
մերոյ,
Ու որով բաղձեալ հասաք գէթ մի ժամ ուխտի
խորհրդոյ։

Էին անդ բազումք, բայց ո՞չ խնդուն ըղձացմունք
այնպէս
Յայտնի կենդանուոյն վառեալ փայլէին երբու մեր
յերես։
Չ'էր որք յայնցանէ ծանօթ խորհրդոյս և ո՛չ որք եւս
Զերջանիկ վայելս, բոցավառ կրից մերոց զայն հան-
դէս։

Սուգ եղև վասն իմ երբ այն խնջոյից շուտափոյթ
վախճան
Եհաս, 'ի միմեանց մեք անջատեցաք՝ յոգւոյ խռով-
ման....
Ո՛հ, կարեմ յուսալ այլ ես այնպիսի ժամու պա-
տահման,
Յոր մարթ իցէ ինձ կրկին վայելել սէրդ յախոր-
ժական։

# ՎԵՐՋԻ՛Ն ԲԱ՛ՆՔ։

Երթամ՝ տխուր ես տկար,
Յերկիր հեռի և օտար.
Ընդ չի՛ք վասն իմ մխիթար,
Ուստի անցցեն կեանքս խաւար։

Ո՛հ. զի անդութ իմ օրհաս
Նոյնպէս յանկարծ վերահաս,
Որկ ՚ի ցաւոց պատուհաս
՚Նախկին զաւուրս խնդարար
» Երթամ տխուր . . . եւն։

Թողի ծանօթս զաննման,
Օ մերձաւորս սիրական,
Թողի նաև գեղազան
Օ սիրուհիս Թով չարար։
» Երթամ տխուր . . . եւն։

՚Քանի՛ դառն է անջատման
՚Ի սիրելեաց այն վայրկեան,
Երբ դրկախառն համբուրման
Յաջորդէ փո՛յթ վերջ, կատար։
» Երթամ տխուր . . . . եւն։

# ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Մերժեալ իմ անժամ յայս հեռի երկիր, յանծա-
նօթ, օտար,
Անանց յիշատակ սիրոյդ էր իմ միշտ ընկեր մխիթար:
՚Ի խորհել զքեն ՚ի ժամ տրտմութե՟ ՚ի դառն վիճակի,
Խնդայի է այն, ՚ի նոյն իսկ նուագ, ՚ի սիրտ և հոգի:
Զրկեալ ՚ի համայն բաղձալեաց սրտի դու էիր իմ
գանձ,
Ունայն էր վասն իմ յոյս, պերճ ճոխութի՟ և փառք
գերապանծ:

Ոչ ինչ յաշխարհի կարէր մխիթարել, տանել զիս
անհոգ,
Իբրու քաղցր սէրդ էր գաղտնեօք սրտիս, հոգւոյս
հրճուանօք:
Որ ինչ քև լինէր զմայլիչ, խնդալար, անուշ, հա-
ճելի,
՚Ի մեկնելն ՚ի քէն դառնայր ինձ ՚ի դառն վիշտ, ցաւ
ձանձրալի:
Դու էիր և եթ ախտից իմ դարման, վիրացս սպե-
ղանի,
Պատուար վտանկից, կարեկից յաղէտս, պաշտպան,
հովանի:

Այն այս զգացմանց էի հաւատի, թէ չէք վերջ, վախճան
փոխադարձ սիրոյ, իմ քարեաց, քաղդի, աւուրց քաղցրութեան։
Բայց ես սխալեցայ 'ի վարկս կարծեաց, զի հատաւ իմ յոյս,
Եւ դու ուխտի քում դրժեալ ընկլուզեր զիս 'ի տարակոյս...
Բայց պատրանք այս չէ գործ անսովոր կամ դիպուած ինչ նոր,
Բայց ընտանի սեռի իւ 'ի նախամօրէ և մինչև ցայսօր։

Ահ, թէ դժբաղդից յատուկ է տանիլ բոլոր աղէտից,
Թո՛ղ և ես թշուառս խառնուի՜մ բաղդի 'ի մէջ այս ախտից
Տարայց այդց ցաւոց, սիրոյդ հարուածոց, աւուրցս սգալի,
Հարեալ յարատասուս թախիծ կենամաշ 'ի սիրտ և հոգի։
Թո՛ղ այս հեծութիւնք, թոյն լող խայթք վիրացս, սուգ, ողբք անդուլ.
Մնասցեն միշտ յիմ սիրտ 'ի քէն յիշատակ, նշան և գրաւ։

Սա թէ վարձ, պտուղ, արդիւնք քո սիրոյ սուտ և անցաւոր,
Օ՜ւր ապա ես զիմ անցուցի զաւուրս 'ի սէր աղտաւոր։

Մի՛ թէ չարչարանք անջատման 'ի քէն չէի՛ն բաւա-
կան,
Օ՜հ այլ և զվէրս զայս դու յիմ վերայ եդեր յաւիտեան։
Չե՞ն քո մեղք, զի դու գիտես անդստին վարել պատ-
րանօք,
Բայց վա՜յ որոց քոց հաւատան բանից անփորձ, կոյր
աչօք։

“Նա որ քեզ եղև յետ իմ անջատման ընկեր սիրական”
Թո՛ղ լիցի և իմ սիրոյ նշպատակ այժմ և առ յապայն,
Ա՛նշուշտ իմ պարտք են յարգել զնա, զոր և դուդ
սիրես,
Օ՜հ սէր իմ 'ի նմա վայելէ զսէրդ, զոր առ նա տա-
ծես....
Խո՛ր եդ վէրս յիմ սիրտ քո փոփոխական բնու՟ն
անհաստատ,
Որ և քում անուան զխաբդախու՟ն բերէ բիծ զարատ։

Կեա՛ց մոռերմնբար, լե՛ր հաստատ 'ի սէրդ, մի՛ կեղծեր
հնարս.
Մ՛ի ես արկաներ սիրոյդ 'ի թակարդ զորդարս, զար-
կարս։
Իւրովի յայտ է, զի նոր սիրելիդ ի՛բր տղայ անզօր։
Ո՛չ կարէ տանել առ 'ի քէն վիրաց.... անփորձ,
անսովոր,
Նա դեռահասակ մանուկ կաթնասուն, հարկիւ բնու՟ն
Կարօտի յաւէտ կաթին քան սիրոյդ, որ չէ մայրական։

Սիրոյն դրդմոք սնուցեալ ծաղիկդ 'ի գեղ պանծալի,
'Ի փթթել յարման՝ ապաժամ անկար 'ի ձեռս օտա-
րի . . . ,
Ո՜հ. չէր ինչ հնար անդարձ կորստեան, եանց ամենայն,
Իմ էիր նախ յոյս, մխիթար 'ի վիշտս, այժմ այ-
լում պատկան։
Բաղձան քո սիրոյ անցցէ յոյժ փութով, զուր և քո պարծանք,
Կորիցեն անհետ և քո բաղձալիք, ժամք հաճոյականք։—

Քո ժպիտ տեսիլ, գեղ զմայլիչ սրտիս, պատկերդ լուսատու,
Արար զեղկելիս քեզ գերի ծառայ ջերմեռանդ, հլու։
Ոչ կարեմ երբեք մոռանալ զքեզ հանգիստ դառնել։
Ո՜հ. մեծ է իմ վիշտ, զմորդ կարացից աղետից յաղ-
թել։—
Յաղթանակ անխիղճ գործոցդ թող լիցի իմ կենաց վախճան,
Թող անցցէ քեզ յուշ զմեռեալս սիրովդ իմ հող, գերեզման։

# ՀԻՒԻՈՆՍԱՆ

## ԿՈՒԱՆԱԻՈՐ։

(Երգէ Տ"։)

Երջանի՛կ է այր, որ վասն օրինաց
Պատրաստ է մեռնել յերբ պարտ է կենաց։
Նա՛յ ընդէմ նորին բնութեան
Նորայն պահապան բանակ հրեշտակաց։
Երջանի՛կ է այր, որ վասն հայրենեաց
Ճաշակեաց զմահ ինքնաբերամբ մտաց։
Նպաստոյ ուրախութ հանդերձեալ ազգաց
Կանգնեսցեն նմա կոթող երախտեաց։

# ՀԱՄԱՌՕՏ
# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԻՐՔ
## ՇԻԼԻՈՆ ԴՂԵԱԿԻ:

Շիլիոն դղեակն, յորում 'ի 1530 մինչ ց 1537 ամ կալեալ տառապէր երեւելին Բոնիվար, քաղաքացին Ժընեւայ, մարտիրոսն հաւատոյ եւ հայրենասիրութեան, կառուցեալ է 'ի մէջ Կլարանի եւ Վիլնեւայ առ Արեւելեան եզերս լճին Ժընեւայ ( Լեմանի):

'Ի նորին պատուհանաց երեւին 'ի միոյ կողմանէ կիրճ Ռոնայ գետոյն, հանդերձ երկարաձգեալ մինչ ցուրքն Մ՚որից եւ Մ՚արտինեայ, ձիւնալից լերինք Վալլիսոյ եւ բարձրաւանդ քարաժայռք Մելերայ, իսկ 'ի միւս կողմանէ, Մոնտրէ, Շատելար, Կլարան, Վեվէ, բազում գիւղօրայք եւ բազում այլ եւ այլ դղեակք:

Յանդիման այցին պարզի անպարագրելի հարթարդակ մակերեւոյթ ջուրց, որք 'ի հնաւուրսն փակին ընդ սահմանս խոնարհ եւ կաղ-տաղթայր եղերաց, յորս 'ի վերայ իբրու պայծառ կէտք ինչ փայլին, Լոզանն, Մորժ, ուրեքն Պիկ եւ Ռոլ. իսկ 'ի հեռաստ նորին ալ-չուատոյր ընծայիւք անկանին 'ի ըլրոյ չուաջաձայն սահմանք:

Դղեակս այս 'ի չորից կողմանց պատեալ է լայնատարր լճիւ, որոյ խորութն չափ հասանէ ց8 հարիւր փարսախ գաղղիացւոց:

Մարթէ կարծել, թէ եղանէ այն 'ի ջուրց, քանզի քարաժայռն, որ է հիմն նորին՝ ամենեւին ոչ երեւի, եւ ուր աւարտ մակերեւոյթ լճին, անդ սկսանին պնդակազմ պարիսպք դղեկին:

Բանտն, յոր տառապէր երեւելին Բոնիվար, մինչ ցայս փակեալ է 'ի սեպացեալ քարաժայռի: Առաստաղք նորին հաստատեալք 'ի վերայ եօթն սեանց, յենուն 'ի ժայռակոյտ ինչ:

Զմիոյ 'ի սեանցն կախի ասկաւլին այն օղ, զորմէ կապեալ էին շղթայք Բոնիվարին. իսկ 'ի գետնի առ ներքնախարսխաւ այնր սեան,

երևի փառաւոր լինել գալեալ յանուշահամ տարաբաղդ կալանաւորին, որ այնչափ երկար ժամանակս ախտակցաւ յածել շղթայակապ ՚ի մի և ՚ի նոյն տեղւոջ:

Ոչ հարի ինձ բացագոյն ՚ի կիրճէ Բռնա գետոյն, որ անկանի ՚ի լիճն Ճէնևայ մերձ առ Վիլնէվ՝ է ՚ի բաւանդակ ընդարձակութ Լէմանի գլխաւ լինել, որ ոչ նշմարի, երբ նաւարկես ՚ի լիճ, այլ գերբաւ մարթ է նկատել զայն ՚ի պատուհանաց գղեկին։

Նայեցարո՛ւք յիս, եմ ես ծերացեալ,
Ո՛չ 'ի հին ամաց յայս ալիս յեցեալ:
Ո՛չ ահ վերահաս արար զիս անժամ
'Ի մուժ և ելթ գիշերի զառամ:
Կորացեալ եմ ես ճակատ եմ կնճռեալ.
Ո՛չ ճգունք, վաստակ, ցուրտ կամ տապ վառեալ. . .
Այլ մաշեաց 'ի սպառ զիս բուռն բախտին:
Զուրկ յանոյշ քաղցրիկ աւուրց բնաւին,
Զուրկ յառողջ օդոյ 'ի շղթայս կապեալ,
Յամր զառամէի մեղմամբ հիւծեալ.
Եւ կեանքն ինձ թուէր անկէտ, անվախճան:
Եղկելի վիճակ հօր թշուառական—
Մահ վասն հաւատոյ, անօրէն շղթայից
Եղև և բաժին որդւոց քուրերց:
Անձինք եօթն էաք, վեցք ահա կորեան:
Հայր մեր նահապետ յամաց մանկունէ,
Այրեցաւ 'ի հուր յալիս ծերունէ:
Երկոքին յեղբարցս 'ի մարտի անկան,
Զփառս և զկեանս 'ի զոհ մատուցին,
Որով սէր հօգւոյ զիւրեանց փրկեցին:
Երեք կենդանւոյն յանդունդս խորին
Թաղեցան, կորեան յանստուեր բանտին. . .
Նոյն իսկ խորուէ եկուլ դերկոսեան.
Իսկ ես մնացի միայնակ կենդան,
Իբրու զաւերակ համայն անբնակ,
Զաւ կոծել նոցին դառնուէ վիճակ:

## XX.

՚Ի մէջ ջուրց կանգնեալ է Շիլեան դղեակ,
Հաստեալ ՚ի վերայ ամուր սեանց եօթնեակ·
Պատեալ են նոքին գէճ՛ մամռով հնաքոյս,
Յորոց ՚ի վերայ շողայ տրտում լոյս։
Նշոյլ ինչ դիպմամբ ծագեալ ՚ի բարձանց
Ընդ ճեղքուած որմոյ մուտ առեալ Թափանց,
Նսկայծեալ ՚ի մէջ Թանձու խաւարին,
՚Ի վերայ տամուկ, ցուրտ գետնի բանդին՝
Նշողէ աղօտ, շող շողայ տխուր,
Որպէս ՚ի ճահճի կխաշէջ ինչ հուր,
՚Ի մռայլ գիշերոյ հազիւ երեւեալ։
Իւրաքանչիւր սեան ունի զօղ ագխեալ·
Օղ, որոց և շղթայք ամրակուռ կախին·
Եւ այնց կապանաց երկաթ Թենալին
՚Ի խոր մխեցաւ՝ կրծեաց զիմ մարմին·
Ոչ լիցի անհետ, այլ կացցէ բնաւին
Նշդեալ ինձ նոցին խարան յարակաց։ —
Օր ձանձիր, տաղտուկ Թուէր իմ աչաց,
Որք խորտացեալ են ՚ի վաղուց ամաց,
Հայել և դիտել զաշխարհ բերկրանաց։
Մինչ վերջին եղբայր իմ վախճանեցաւ,
Հարեալ կապանօք աչացս զառաջեաւ,
՚Ի փրկանս անձին հոգիս պաղեցաւ,
Եւ ես ի մեռեալս մնացեալ կենդանի՝
Կոծ մեծ կոծեցի անդր ՚ի բանտի։

«Նոյն լոկ շղթայիւք էաք մեք կապեալ,
Ընկերօք ըզ սիւնս պլլեալ կաշկանդեալ,
Թէ և մերձ միմեանց, սակայն անջատեալ.
Գելեալ կապանօք մնացեալ հիւծեալ. . .
Մեք ոչ կարէաք գէթ քայլ մի փոխել,
Զառաջեաւ աչաց զիրեարս ճանաչել։
Զի խաւար բանտին էր մեզ խոչ, արգել,
Որ փոխեաց և մեր զերեսս անընդել,
Մինչ եղբայր եղբօր երևէր օտար։
Այն էր մեզ և եթ միակ մխիթար—
Ձայն տալ իրերաց, ասել և խօսել,
Այնու միմեանց սիրտ յուսով խրախուսել,
Կամ՝ զերբեմն զանցս նախնեաց վիպել,
Եւ կամ՝ քաղցրաձայն զերգ մարտի երգել։
Այլ ՚ի նոյն ըզ փոյթ, թէ՛ այս և թէ՛ այն
Ի խաւար բանտին սպառեցաւ համայն։
Նա՝ ձայն մեր եղև վայրագ գլխոյն,
Իբրու զարձագանգ ահուելի բանտին։
Չ՚էր այն հին ամացն հնչիւն քաղցրագին,
Երբ էաք հզօր ազատ, զուարթագին.
Միթէ ցնորք իցեն . . . . ձայն իմ և նոցին
Միշտ հնչէր, թուէր ինձ ձայն օտարին։

Ի մէջ մեր երից երէցն ես էի,
Մոռացայ ես զիմ վիճակ ողբալի,
Յայն և եթ զբաղեալ էի ես հոգով,
Զի մի՛ տաց նոցա վհատիլ հոգւով։
Եղբայր մեր կրտսեր սէր հօր կաթոգին....
Նուաղ, գեղազուն կերպ դիմաց նորին,
Քաղցրատես հայեացք, գեղ աչաց անգին,
Կապոյտ և պայծառ իբրու ջինջ երկին,
Զանձկալին մեր մայր ցանգ մեզ յիշէին։
Նա էր իմ ամէն, եղբայր ծանրագին·
Եւ առ իմ աչօք այս սէր իմ քաղցրիկ,
Ջքնաղ դեռափթիթ, հաճելին ծաղիկ,
Խամրեալ թօշնեցաւ զերթ օդ թափանցիկ·
Կամ նման լուսոյ աւուրցն երջանիկ,
Գրաւեալ մահու չարատանջ սաստիկ՝
Որ լուսաւորէր զիս ծագէր յերկնից
Մինչ էի ազատ ես առանց կապից։
Իբրու արշալոյս նա զուարթ, մաքուր,
Մանուկ, բայց մտօք՝ էր կայտառ և սուր։
Անփոյթ, աչալուրջ միշտ ինքն ՚ի ինքեան....
Այժմ առ օտարին վշտաց տրտմութեան,
Ի նորին կապոյտ, գեղադէշ յաչաց
Աժխեալ խաղային հոսանք արտասուաց։

## Ծ.

Երկրորդ իմ եղբօր նոյն սուրբ էր հոգի.
Սակայն զմարտկի ունէր նա զոգի,
Քաջ, հուժկու, յոխորտ՚ի ծաղկեալ հասակ,
Խրախ կոչէր ՚ի մարտ զաշխարհ բովանդակ,
Կամք պատրաստ ՚ի մահ, միշտ յառաջընթաց....
Նաև յոյժ անհանդուրժ ցաւոց կապանաց:
Եւ նա շղթայիւք հիւծեալ չարաչար,
Փութացաւ անդէն ՚ի կենաց վճար:
Տեսի, թէ զի՛արդ ընդ մեզ տագնապաց,
Շիջաւ մերձ առ մեզ, անտես մեր աչաց:
Նա կիրթ, վարժ որսորդ, էր բնակիչ բլրոց,
Սանիչ վարազուց, քանասար գայլոց:—
Ոհ. տապան նորայն էր բնաւ մեգամած,
Չ՚իշխեաց արութիւնն տանիլ կապանաց:

## ԾԱ.

Պատեալ է Շիլլոն Լեմանու (*) խորին,
Ընչափ է անբաւ յատակ ջուրց նորին:

---

(*) Լեման է անուն Ճենովեան լճի: Հեղինակն կամի ասել, թէ Շիլոն դղեակ ՚ի չորից կողմանց պատեալ է խորին լճիւ Ճենովայ: Իսկ թէ զի՞նչ իցէ Ճենով և զի՞նչ ինչ իմանալի յատուկ անուամբք՝ որք ՚ի նախընթաց բացատրութ՝ ընթերցասէրն գտցէ զխնդրելին Աշխարհագրութ:

Երկակի պարիսպք, կոհակք ահագին
Տան անլոյս բանտին զամբուն կրկին։
Տրտում առաստաղ ժահահոտ և սին,
Մ՚առնամուտ գիձին, յարկ տարտարոսին,
Որ էր կենդանեացս տապան խաւարին՝
Փորեալ էր ընդ ջրովք ՚ի քարաժայռին։
Օ՜ ցայգ և՞ զցերեկ շառաչիւն ալեաց,
Նա մնարիւք մերովք դղդչեալ սահմանաց,
Ուժգին ճայթելոց յաղուու պարսպաց՝
Լսելի լինէր մերոց ականջաց։
Նոր զի հողմավար յորձանք եռանդեան,
Հասեալ ժամանեալ մինչ ցպատուհան,
՚Ի ցայտ անձրևի զմեզ սրսկէին.
Նա էր զի մրրիկք սաստիկ յառնէին,
Յորոց քարաժայռ դողայր, դողդոջէր։
Նա անյագ բղձիւ հոգի մեր սպասէր,
Թէ այն երիզուտ անկցի ՚ի կործան,
Ծածկեսցէ զմեզ ը̃ իւր յաւիտեան։
Նայ, տարաբաղդ ժամն յանկարծ մահուան
Լինէր վասն մեր ժամ ազատութեան։

Միջակ մեր եղբայր, որպէս ասացաւ,
Հոգւով տառապեալ՝ անժամ թօշնեցաւ։
Լքեալ, չարչարեալ, վշտահար, ախտուր,
Ոչ կամեր ուտել երբէք կերակուր։
Խիստ են ուտելիք տրտմահոծ բանտին,

Նոյն վէմ հզօր, որ նուաճգին
Տանիլ այս կարեաց է կարի դիւրին։
Փոխանակ Նշլեան այծեման կալթին,
Ս՛ մեր նեխեալ էր ջուր դառնագին.
Իսկ զ չոր հաց մեր հանապազորդեան,
Յայն օրէ երբ ժանտ շղթայք բռնեղծան՝
Մեզ գերեաց 'ի մէջ անել կապանաց
Միշտ թանալ պարտ էր առուօք արտասուաց։
Ո՛չ թէ ապաժամ 'ի խիստ պլտոյից
Սատեալ մաշեցաւ եղբայրս սրտակից,
Ո՛հ, թէ և լինէր անկարօտ, առատ,
Նոյնպէս թառամէր, թէ չ՛էր նա ազատ. . . .
Եւ առ ի՞նչ լուռ կալ թշուառ իմ անձին։
Գրաւեաց զնա մահ . . . . և ես տալ նմին
Չ'իշխեցի զիմ ձեռս յայն պահու վերջին։
Չ'իշխեցի փակել շիջեալ զաչս նորին։
'Ի զուր զիմ շղթայս կրծեցի, հառի—
Մահակցիլ նմա 'ի միում կարգի. . .
Մեռաւ իմ եղբայր միայն, եզակի։
Մերձ էի առ նա, այլ և յոյժ հեռի.
Կարացի լսել, որպէս նա շնչէր,
Ո՛րպէս եղկելին շնչասպառ լինէր,
Զիա՛րդ յուր շղթայս դողայր և սարսէր,
Եւ զի՛արդ աչքն յանկարծ շիջանէր
'Ի մէջ խորունկ բանտի մթագին. . . .
Նոքա 'ի դիոյն զշղթայս բարձին,
Առանց դագաղի զնա թաղեցին
'Ի խոր, սառուցեալ ծոց այնր երկրի,

Յորոյ 'ի վերայ լեալ էր նա գերի։
Զոր ես 'ի նոցունց լալով խնդրեցի,
Զի եղբօր իմում գերեզման տացի
Յայնպիսում իմն հանգստեան վայրի,
Ուր հանապազօր լոյս աւուր ծագի։
Անխոհեմ էր այս իմ կարծիք վերջին,
Այլ այն խիստ ճնշէր, ճմլէր զիմ հոգին,
Զի ազատ լիցի գէթ փոշի նորին
'Ի մէջ վիմափոր տապանի խորին։
»Քանզի ինձ թուէր, թէ բանակին 'ի ծոց—
»Երբէք չէ խաղաղ քուն ննջեցելոց. . . .
Այլ իմ արտասուաց էր պատասխանի,
Ցուրտ, կծողական ծիծաղ ծաղրալի.
Եւ եղբօր իմոյ սառուցեալ մարմին
Թաղեցաւ 'ի գէջ հող խաւար բանակին,
Ուրանօր շղթայք, մնացեալք յետ մահուան՝
Եւ գլխով նորա աճն 'ի կախ կան.
Որ ոչ անմեղաց այժ յիշատակ,
Այլ մարդասպանաց յաւէտ 'ի ծանակ։

## ՔՈՅՐ.

Նա էր մեր չքնաղ ծաղիկ աննման,
Մեր անմահ հրեշտակ յամոց մանկութեան։
Նա գանձ ցանկալի ընտանեաց համայն
Եւ բարի հոգւով մօր մերում նման,
Զորոյ գեղեցիկ ունէր կերպարան.
Ըստ որոց և հօր մեր յոյժ սիրական։

Կամեցայ ես կեալ 'ի կենդանուն,
Զի ուրախ լիցի նա 'ի գերուն.
Եւ յետոյ ազատ կարասցէ լինել. . . .
Ամբէ, մանկական մեծի հիւղին,
Որ հանդուրժանօք երկայնմտուն
Կարաց վիճակին ի յերկար տանել.
Ո՛չ թէ ես նմա. . . . այլ նա էր վա՜ իմ
'Նեցուկ հաստատուն, ընկեր մտերիմ. . . .
Յանկարծ օր յորէ յուժոյ թափեցաւ,
Տառապեաց, լռեաց և լուռ թօշնեցաւ.
Ո՛վ Ա.Ծ., Աստուած. խիստ է տեսանել,
Երբ մարդոյն զկեանս ձգնի մահ կլանել. . . .
Տեսի սարսափմամբ, մինչ վառեալ 'ի մարտ,
Իսկոյն անկանէր ախոյեան անպարտ.
Տեսի երբ նաւորդ մածեալ ի տախտակ՝
Հեղձնոյր ի նմին 'ի ծովուն յատակ.
'Դ զուր նա 'ի փայտ լինէր ապաստան. . .
Յողդողդ յոյս նորին էր յոյս կորստեան.
Տեսի, թէ զինորդ չարագործ դաժան
Վայրենի դիմօք, անգեղջ, զերթ անբան,
Հայհոյէր շրթամբք յեշոցս արկանէր,
Մինչ զնա սատակել մահ անագանէր.
Այլ անդ էր երկիւղ. . . . իսկ աստ վիշտ և ցաւ,
Տրտմուն հոգւոյ, տառապանք անդրաւ.
Իբրու հեզ հրեշտակ յանխռով հանդստեան,
Համբոյր և խաղաղ, քաղցրիկ և անձայն,
Անյոյս համբերող, գոգ թօշնեալ ինչ վարդ,

Տրտում և լքեալ, անոք և հանդարտ,
Շիջաւ իմ եղբայր առանց արտասուաց,
Միայն յիշեալ զիս և զորս յընտանեաց․․․
Աւա՜ղ, նա էանց իբրու ծիածան,
Որ գերդ երանգօք հաճեալ զաչս մարդկան՝
Զքնաղ շիջանի 'ի կամար երկնից։
Շիջաւ նա անխօս, անվիշտ, յուսալից,
Իբր 'ի սպանդ վարեալ որոջ անմռունչ,
Զիւրոյ վիճակէ չանիծելով զաստուածն։
Միայն սակաւուք ձայնիւ յոյժ ակար,
Մեր զանցեալ աւուրց մատչէր նա 'ի Ճաւ․
Իբր զի զապագայ լաւ ժամուց պատմէր,
Իբր զի ժպտելով զկուսոյ խօսէր․․․
Այլ սոյնն մահու անգիտ կորստեան
Իւր զառածեալ յանշունչ մոռացմամբ։
Զո՜ւր 'ի մեռանելն նա զիւր հոգեկան
Գուն գործէր ծածկել զչարչարանս մահուան․․․
Յանկարծ դողալով ցաւագին շնչեաց,
Եւ անդէն, աւա՜ղ, հանդարտեալ լռեաց․․․]
Ահեղ լռութեամբ զարթնում նոյնհետայն,
Լսեմ հիացմամբ․․․ խաղաղ է համայն։
Ուժգին զայրացմամբ արձակեմ կոչիւն․․․
Անձայնէ պարխալ․․․․ և քաունի բոմբիւն։
Ջանամ յուսահատ շղթայս հատանել,
Հասի փոսին անդրէն անարգել․․․
Փութամ առ եղբայր․․․ այլ եղբայր իմ չէր։
Նա իբրու գարնան հաճելի ծաղիկ,
Գեղաբոյս մատաղ, թարմ և գեղեցիկ՝

Ձարեալ ՚ի ցրտոյ դառնաշունչ սաստիկ,
Որ ՚ի գլուխ յերկիր հանդէպ իմ աչաց,
Կախի նա է սեւն ՚ի մէջ կապանաց։
Ես նորին զանշարժ կալայ զհեւանէ,
Օգացի, զմարդ մեղմով անցանէ·
Յայնմիկ հետ ոկար մերջին ջերմուն։
Ինձ այնպէս թուէր, թէ իմ հոգեկան
Ոյժ և զօրութն ՚ի սպառ մերուցան։
Յանկարծ յիս ահեղ պաղեցաւ համայն։
Ես թափուէի ցնորեալ ՚ի քանտին. . . .
Այլ անտի հանգիստ էր յոյժ ահագին·
Միայն ժամանաշունչ ցուրտ ինչ մահաբեր
՚Ի գէջ պարսպաց անընդհատ շնչէր։
Եւ շաչս իմ յաւեալ ՚ի զոհ խիստ մահուան,
Ես ոչ զիս հաստատ կարծէի կենդանի։
Ո՜հ, որչափ վիշտ է գիտուն յայնմիկ,
Յորժամ իմանամք մեք անդրէն այնուհիկ,
Թէ չէք ես մեր քաղցրիկ սիրական։
Ո՜վ, զիս ոչ եհար այս ահեղ վայրկեան։
Ո՛չ գիտեմ թէ՛ զի՞նչ . . . . հաւանտ լուսազգեաց
Թէ՛ ձանձրոյթ առ կեանս զիմ կեանս աղատեաց։

XX.

Այլ թէ զի՞նչ ապա պատահեաց ընդ իս,
Ո՛չ յիշեմ երբէք . . . զի ոչ գոյր միտք յիս։

Լոյս ինձ երևէր խաւար ինչ աղօտ,
Եւ խաւար վասն իմ էր լոյս անաղօտ.
Կորնչէր այեր լայնուն յանհուն.
Թմրեալ սառուցեալ կայի անխօսուն,
Ուշաթափ, անխել, թարց ինչ զգայուն,
Ի մէջ ցուրտ վիմաց գերթ վէմ անկենդան.
Թուէր ինձ համայն իբր 'ի քուն դանդաղ,
Գունատ, միգապատ, մնայլ շամանդաղ.
Հեղաւ ամենայն յաղօտ խաւն ստուեր.
Այն ոչ էր ոչ օր, և ոչ մութ գիշեր,
Եւ ոչ իմ բանտի լոյս յոյժ ծանրալի,
Այնչափ ատելին աչացս ձանձրալի.
Այն էր աղջամուղջ առանց մթութեան.
Այն էր խոր անդունդ մեծ դատարկուն,
Առանց լայնութեան, անչափ, անսահման.
Նորաստեղծ տեսիլ, դէմք անկերպարան.
Այն էր աշխարհ ինչ նոր և ահագին,
Առանց աստեղաց անլոյս աներկին.
Չէր յայն ժամանակ, ոչ օր, ոչ տարի,
Չէր և Տեսչուն, ոչ չար, ոչ բարի.
Ոչ կեանք և ոչ մահ, այլ քուն տապանաց,
Իբր Ովկիանոս առանց եզերաց,
Ընկճեալ թանձրամած մնայլիւք մթին,
Անշարժ թխպալից, խեղդեալ խաւարչտին.

X.

Յանկարծ սթափեալ յուշ եղէ անձին·
'Ի ձայնէ թռչնոյ, որ 'ի վեր բանտին,
Իր զի 'ի լոյս կայր, և էր զի երգէր,
Եւ յերկնից առ իս նա իջեալ թուէր։
Զուարճ էր սփոփիչ, քաղցրաձայն կարի,
Որով կախարդեալ եղէ կենդանի,
Ունկն մատուցի, ապշեցայ 'ի սպառ։
Այլ այս բերկրութիւն չ'եղև ի երկար,
Քանզի սկսան միտք իմ վերստին։
Երթալ ի սովոր անձկութեան ուղին։
Զարթեայ, ուշ եկի, զարմացեալ տեսի,
Զի նոյն բանտ դարձեալ էր իմ առաջի,
Նոյն իսկ լուռ, նոյն անդ և խաւար։
Ուր շնչէր անդուլ նոյն ցուրտ հողմավ
Ուստի նախ աղօտ լոյս աւուր ծագէր
Ընդ հերձուած որմոյն առ իս մուտ առնէր·
Ընդ իմ օդային երգեցիկ նստէր,
Եւ զիւր թևս կապոյտ երերեալ շարժէր։
Նա գեղազարդեալ աւուրբ լուսաբեր։
Ճչէր ողբալուր, տրտմագին մնչէր,
Նուաստամատոյց ձայնիւ յիս երգէր· . . .
Ո՛վ. թէ որչափ այն երգ հոգւոյ ազդէր։
Երևէր զինեն դայլայլիկ նորին։
Բայց· անմոռացք ինձ 'ի յուշ եկին· . . .
Եւ մինչ ցայն նուագ իմ հանգոյն նմին

Չ՛էր երբէք լուեալ ձայն ինչ քաղցրագին։
Թուէր թէ ընդ իս և նա ցաւագին,
Զրկեալ յեղբօրէ՝ կոծէր տրտմագին։
Նա իւր անձկալի սիրով ինձ յայտնեաց,
Թէ ես գէթ 'ի մի սրտէ չ՛եմ սիրած։
Երգ նորին վասն իմ էր երգ քաղցրութեան,
Որով ողջացան վէրք իմ հոգեկան։
Այլ ո՛վ էր այս իմ բաղձալի երգիչ։
Մի թէ եթերաց ազատ բնակիչ,
Կամ նորոգ զերծեալ 'ի խիստ կապանաց՝
Ըստ դիպման առ իմ բանտ խաւարամած,
Խաղալով յերկինս՝ դէպ ուղիղ թռեաց,
Եւ զազատութիւն ինձ անտի երգեաց։
Ասացէ՞ց արդեօք. . . . ո՛հ ես կարծեցի,
Թէ եցէ ընդ իս ո՛չ թէ հիւր երկրի,
Այլ հիւր Եդեմայ, — եղբօր իմ ոգի,
Որ 'ի սփոփել զիմ սիրտ և հոգի,
Առեալ ձև թռչնոյ, յերկնից փութացաւ. . . .
Այլ մխիթարիչս յանկարծ վերացաւ,
Սլացաւ նա 'ի լոյս հասարակ աւուր. . . .
Ոչ, ո՛չ, չէր նա իմ եղբայր սուրբ մաքուր. . . .
Որ ո՛չ թողոյր զիս այսպէս խստագին,
Զի 'ի նմանէ մեկնեալ իմ կրկին՝
Մնայի վերստին ես առանձնակի,
Իբրու դի անկեալ 'ի մէջ դեսպակի։

## XI.

Ահա փոխեցաւ յանկարծ իմ վիճակ,
Զի բանտապահից 'ի սիրտ դժնդակ
Եգիտ ճանապարհ, գութ ինչ անսովոր —
Յայն վայր եր'նոցա հոգի ահաւոր,
Անզգայ քան զիմ երկաթ կապանաց։
Այլ թէ զինչ 'ի գութ զնոսա շարժեաց,
Ո՛ զողորմութիւն յիմ սակս խնդրեաց,
Կամ էր խստուն յիս այսչափ խնայեաց,
Ես ոչինչ գիտեմ․ ․ ․ ․ Միայն զի դարձեալ
Կապանօք ը՟ պատ չէի ես պնդեալ․
Զիմ պարանոցէ շղթայք իմ քաղխեալ,
Յանգ շուաչէին ցիր և ցան կախեալ․
Աւ որմովք շուրջ ղսեամբք 'ի մէջի բանտին
Ես տատանէի անդուլ ը՟ նոսին,
Միայն ոչ երբէք իշխէի զ՚տապան,
Կոխել առ ոտիւք զեղբարց սիրական․
Զի մի՛ նեղեցից ես անդ զերկրայն
Իմ անսուրբ հետովք սրբութիւն վերջին։

## XII.

Ինձ յայսմհետէ չէր ինչ դժուարին
Գործել շղթայիւք վերելակս յորմին։

Այլ ազատութիւն էր կայծ հեւի
Յիմ տրտում մնաց. . . . և յանձնէ գերի։
Ո՛հ. որք էին ես, և աշխարհ համայն
Խորդացաւ վասն իմ, կեանք իմ էր ունայն։
Ընդելացուցի զիմ կեանս ը̅ բանտին,
Ո՛ւր և զիմ բոլոր ընտանիս անգին,
Օ՛ որ ես քաջ ծանեայ, և զոր սիրեցի,
Նղէ՜, մի առ մի անդարձ թաղեցի։
Եւ յիշխանութեան ասուր խնդաբեր
Սան իմ տակաւին ոչ որք բնակէր։
Ես առանց տեղւոյ 'ի խնջոյս երկրէ,
Եւ անդ օտար հիւր վարկպարազի,
Կամ իբրու ամպ ինչ 'ի յաւուր պայծառ,
Կորեալ 'ի բարձունս, մոլորեալ, խաւար,
Ի ճառագայթիւք ջինջ արեգական,
'Ի վերայ երկնից բնաւ անպիտան. . . .
Այլ ես կամեցայ զաչացս հայեցուած
Արձակել 'ի գեղ ինձ ծանօթ լերանց,
Յանտառս և 'ի ծայրս նոցին սեպացեալ,
Նոյն և 'ի յերկինս ը̅ նոսին մածեալ։

## XIII.

Տեսի զայնոսիկ, — և բոլորք նոքին,
Այն անփոփոխ ը̅ նախնի կերպին,

Կուտակք դալարու ճանց 'ի կատարս նոցին,
Որոց 'ի լանջի հովիտք ծաղկածին,
Նա սոսորտալ էր անդունդ լճոյս։
Ծործանք ամհանաց Մանա յորդ գետոյն
Փայլէին 'ի մէջ կանաչ եղերաց։
Եւ ինձ մէկի էր ձայն աղբերաց,
Ձեռ լոյ կարկաչմամբ ը̃ ժայռ հոսելոց։
Ընդ խաղաղ երես կապուտերանգ ջրոց
Թռչէին յստակ փայլուն կայծք ամպոց,
Ջերմ ախպ պճանչելի, դերք չքնաղ ալլոց։
Երագ առագաստ նաւակղակի
Երկնից և ջրոց փայլէր 'ի մէջի։
Զբաւոր խոխլիթք լուրջ զննականաց,
Եւ շքեղ շինուածք պայծառ քաղաքաց,
Նա եզերբ ը̃ մեծ շողս արծաթէին . . .
Ես նշմարեցի փոքրիկ ինչ կղզեակ,
Գեղեցիկ, զուարթ, սակայն միայնակ։
Էր այն 'ի կապոյտ ը̃արձակութեան,
Ուր ծաղկէին ծառք երեք զանազան։
Շնչէր անդ ջինջ օդ բարձրաւանդ լերանց,
'Ի մէջի սիզոց, հոտաւէտ ծաղկանց։
Եւ ջուրք անդամոր կենդանի էին,
Որ և առ ընդել ափամբքն նոցին,
Պատեալ նազաահ սուր ընթանային։
Տեսի, զի մակոյկ ը̃ վարժ լողորդաց
Դէպ առ իմ պարիսպ նաւեալ դադարեաց։
Ընդ նա առ եզեր առ ժամ [illegible] եկաց,
Եւ իբրու հողմիկ յաջողակ յարեաւ,

Փոյթ յետադարձեալ, յաչաց ծածկեցաւ։
Ընդ վերին ամպովք խաղայր արծուի,
Զան զոր սրագոյն 'ի թռիչ ո՛չ տեսի։
Կամ առ լուսամուտն 'ի վայր իջանէր,
Եւ կամ 'ի բարձունս սրասլաց ելանէր. . .
Օ՜, որոյ զ՞հետ և իմ հոգի թռանէր։
Նոր գետ արտասուաց յիմ աչաց բղխէր,
Նոր ինչ տխրութի զկուրծ իմ ձմլէր,
Եւ նոր վիշտ զիմ սիրտ խոցէր կարեվէր. . .
Դու շղթայս իմ, զոր 'ի բաց ձըգեցի,
Դարձեալ յո՛չ կամաց ես խնայեցի։
Իսկ յորժամ 'ի ծոց իմ խոնաւ բանտին
Եղև մտանել ինձ հարկ վերստին. . .
Թուէր, թէ գրկեաց զիս ցուրտ գերեզման,
Թուէր, թէ նորոգ սէր իմ անձնման,
Հանդէպ իմ աչաց՝ եղբայր իմ անգին
Կլաւ 'ի կոկորդ անյագ գէձ երկրին։
Այլ զհարդ իմ կուրծ նեղէր ցաւագին,
Հարեալ 'ի վշտաց կարի սաստկագին,
Եւ 'ի համդարտիլ յաղետից սրտին,
Սան իմ սփոփանք էր խաւար բանտին։

## XIV.

Օր գայր հասանէր և օր անցանէր,
Անցին և տարիք գող թեթև սաւէր։

Երբեք զայնոսիկ ես ոչ թուեցի.
Զիմ յիշողութիւն բարձեալ կարծեցի
Զփոփոխութեանց, որք յերկրի լինին.
Ահա՛ և մարդիկ վերջապէս եկին
Ինձ զազատութիւն թշուառ ընծայել,
Վասն էր, կամ զի՞արդ զայնմանէ գիտել,
Ես ոչ կամեցայ զմտաւ ածել.
՚Ի վաղուց ուսայ մի և նոյն կարծել,
Թէ՛ թարց շղթայից, թէ նոցին միջի,
Ես անյոյս լինել կարի սիրեցի.
Եւ անխտրաբար նոցա անսացի,
Անզգայ, յանհոգս շղթայս հանեցի,
Եւ այն ընդերկրեայք, որք նախ ձանձրալի՝
Յանկարծ ինձ դարձան ՚ի յարկ ցանկալի. . .
Անդ էր իմ ամէն, ընկեր, ընտանի.—
Սարդ իմոյ բանտի ՚ի պատուհանի
Գործէր հանդարտիկ զիւր հիւսս ոստայն.
Ես ՚ի խաղալ անդ խլըտիկ մկան,
Սիրէի հայիլ առ լուսով լուսնի.—
Ես առ իմ շղթայս զիմ ձեռն ուսուցի.—
Տե՛ս, ի՜բր եմք մեք մեզ անհաւատարիմ. . .
Ընդ սեամս իմ բանտին երբ անցին ոտք իմ,
Եւ յազատութիւն այն ե՛ս չ քայլեցի,
Վասն իմոյս բանտի ես յոգւոց ելի.

## ՎԱՐԴ

(ա Տասսոյն)

ՀՍԽՀ ՀՈՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ССРА Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ

(Տ. Տուռնէ։)


Երես

1 Գոյութ. Աստուծոյ (I Երկինք) . . 5

— II Երկիր . . . . . 10

— III Ջուր . . . . . 14

— IV Օդ . . . . . . 20

— V Հուր . . . . . . 22

2 Խորհրդածութ. (յեկղ") . . . . . 25

3 Աղերս առ Ած . . . . . 37

4 Խոստովանութիւն . . . . . 39

5 Վհատութիւն . . . . . . 44

6 Ի մահ դստեր . . . . . . 48

7 — Աղեքսանդրի Ա.ն Կայսերն Ռուսաց 50

8 Հովուերգութ. . . . . . 54

9 Բաղդ . . . . . . . . 5

10 Ապաժամ ողջունն . . . . . 60

11 Յիշողութիւն . . . . . . 64

12 Հնախօսութիւն (Հոգի) . . . . 65

13 Այցելու գերեզմանատան . . . 71

| | | |
|---|---|---|
| 14 | Անեղծուած . . . . . . . . . | 79 |
| 15 | Աղօ՛թս առ . . . . . . | 80 |
| 16 | Երգ . . . . . . . . . . . | 81 |
| 17 | Ձախաւորութիւն . . . . . | 85 |
| 18 | Միաբանութիւն ՚ի վերայ սիրոյ . . | 87 |
| 19 | Յիշատակութիւն . . . . . | 102 |
| 20 | Ծաղիկ . . . . . . . . | 103 |
| 21 | Փոփոխամիտ . . . . . . | 104 |
| 22 | Երեւակայութիւն : . . . . | 107 |
| 23 | Դիպուած : . . . | 109 |
| 24 | Առարկայ սիրոյ . . . | 111 |
| 25 | Փոփոխութիւն . . . . | 117 |
| 26 | Դժգոհութիւն . . . | 118 |
| 27 | Հատուած : . : . . | 120 |
| 28 | Աչերս . : . . | — |
| 29 | Անջատումն . . : . . | 121 |
| 30 | Հանդիպումն . . . . . | 123 |
| 31 | Գաղտնիք . . . . | 124 |
| 32 | Վերջին բանք . . . . . | 126 |
| 33 | Անհաւատարմութիւն . . . . | 127 |
| 34 | Շիլիոնեան կալանաւոր . . . | 131 |

# ՍԽԱԼՄՈՒՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

| Եջ. | Տող. | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|---|
| 9 | 10 | երկնածնաց | երկրածնաց։ |
| — | վերջին | Որ էն | Որ Էն։ |
| 11 | 7 | յուլթի արգաուեօք | յուլթի արգասեօք։ |
| 12 | 12 | Ցածեր | Ցածէր։ |
| 14 | 7 | յինքեանս զմարմին | յինքեան զմարմինս։ |
| 17 | 20 | աչ | ոչ։ |
| 20 | 13 | Նպ | Նպ։ |
| 26 | 11 | խոլրկան | խօլական։ |
| — | 15 | դեղխ | դեղխ։ |
| 29 | 5 | խտարնաց | խտրանաց։ |
| 52 | 4 | օր րաց | օրօրոց։ |
| 64 | 13 | կալթուգին | կալթոգին։ |
| 65 | 23 | թագաւորին | թագաւորեն։ |
| 74 | 1 | գնէք | դնէք։ |
| 84 | վերջին | Նեղեր | Ճեղեր։ |
| 87 | 13 | ազատեցման | ազդեցման։ |
| 96 | 4 | կալթոկին | կալթոգին։ |
| 110 | 22 | անկնապեշ | անկնկալ։ |
| 117 | 5 | թողեր | թողէր։ |
| 122 | 6 | վարձանաց | փորձանաց։ |
| 130 | 1 | 'ի գեղ | 'ի գեղ։ |
| 140 | 24 | կամեր | կամէր։ |
| 147 | 22 | աղգեր | աղդէր |

9362

2013